ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ 27-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

/Նոյեմբերի 2-3/

ԵՐԵՎԱՆ 2000

947.925(063)

Տպագրվում է Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ. գ. թ. Ա. Ա. Մելքոնյան
խմբագիր՝ պ. գ. թ. Ք. Ռ. Ավագյան

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
Երիտասարդ գիտաշխատողների 27-րդ նստաշրջանի հիմնադրույթներ
Երևան, 2 - 3 նոյեմբերի 2000թ.

Институт Истории Академии Наук Республики Армения
Тезисы докладов XXVII научной сессии молодых учёных
Ереван 2 - 3 ноября 2000г.

A II 86/145

ՆՈՐԱՅՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
/ՀՀ ԳԱԱ ՊԻ/

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ԱՌԱՋԻՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

Մովսես Խորենացին իր «Պատմութիւն Հայոց»-ում, անդրադառնալով քրիստոսաբանական դավանաբանության խնդիրներին, բավական մանրամասն գրել է Առաջին Տիեզերական՝ Նիկիայի ժողովի մասին (Մովսես Խորենացի, Գ. 89): Պատմահոր երկի խնդրո առարկա հատվածի պատմա-դավանաբանական բնույթով է պայմանավորված նրա շարադրանքի հաջորդական կարգը: Այդտեղ նախ ուրվագծվում է այն դավանանքային պայքարը, որը եկեղեցու հայրերը մղել են IV դարի առաջին տասնամյակներում Արիոս Աղեքսանդրացու վարդապետության դեմ, ըստ որի «Յիսուս Քրիստոս չէ Որդի Աստուծոյ մարդացեալ, այլ գերագոյն արարած մը, եւ թէ իրեն տրուած Որդի Աստուծոյ կոչումը բառական իմաստով առնելու չէ... »: Այդ ժամանակաշրջանում Քրիստոսի անձի շուրջ վիճաբանությունները թեժացել էին և Քրիստոնեական եկեղեցու մեջ ծագած հակառակությունները լուծելու նպատակով կայսր Կոստանդիանոս Ա-ն (324-337 թթ.) Նիկիա քաղաքում հրավիրեց Առաջին Տիեզերական ժողովը (325 թ.):

Խորենացին, գրելով այդ ժողովին մասնակցելու համար՝ Կոստանդիանոսի կողմից Հայոց արքա Տրդատ Գ-ի և Հայաստանեայց եկեղեցու եպիսկոպոսապետ Գրիգոր Լուսավորչի հրավիրվելու մասին, անդրադարձել է նաև Նիկիա չգնալու նրանց որոշման հանգամանքներին: Խորենացու շարադրանքի վերլուծությունը ցույց է տալիս, որ ի տարբերություն Ռ. Թոմսոնի, Գ. Սարգսյանը սկզբնաղբյուրին հարազատ մեթոդով է պարզաբանել այդ հատվածի ժամանակագրական կարգը: Պատմահոր տեքստից հետևում է, որ Սասանյանները արևելքից արդեն ապահովել էին իրենց թիկունքը և, օգտվելով Տրդատի բացակայությունից, կարող էին հարձակվել Մեծ Հայքի թագավորության վրա: Ինչ վերաբերում է Սուրբ Գրիգորին, ապա նրա չմեկնելը Նիկիա Խորենացին բացատրել է Լուսավորչի *խոստովանողական* համբավով: Խոնարհությամբ թելադրված նման վարքը հայտնի է Ս. Գրիգորի կյանքի մեկ այլ դրվագից, որի մասին իմանում ենք Ագաթանգեղոսից (V դ.): Տրդատը խնդրեց արդեն եպիսկոպոսապետ օծված Լուսավորչին, իր հետ շրջել երկրում, սակայն Գրիգոր Լուսավորիչը հրաժարվեց, քանզի կամեցավ ապրել անբնակ տեղերում, ինքն իրեն պահքով խոնարհեցնելով, որ չլի-

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

նի թե հպարտությունը գլուխ բարձրացնի և ոտնակոխ անի իրեն (Ագաթանգեղոս, 858):

Տրդատ թագավորը և Գրիգոր Լուսավորչը իրենց փոխարեն Նիկիա են ուղարկում Լուսավորչի որդուն՝ Արիստակես եպիսկոպոսին: Նիկիայի ժողովը նախ, նզովելով, մերժեց արիոսականներին (արիանոսականներ) եկեղեցու հաղորդությունից և նրանք կայսեր հրամանով աքսորվեցին: Այնուհետև Նիկիայի ժողովում ընդունվեց Հավատո Հանգանակը: Արիստակես եպիսկոպոսը վերադառնալով Հայաստան, Նիկիայի ժողովում հաստատված Հավատո Հանգանակը և քսան կանոնները Վաղարշապատում ներկայացրեց Գրիգոր Լուսավորչին և Տրդատ թագավորին: Հավատո Հանգանակին է վերաբերում Մովսես Խորենացու օգտագործած «Արժանահաւատ բան» արտահայտությունը:

Հայոց հողի վրա եկեղեցու դավանությունը զգուշությամբ պահպանելու տեսանկյունից է գնահատում Մովսես Խորենացին Ս. Գրիգոր Լուսավորչի կանոնների ավելացումը Արիստակես եպիսկոպոսի Նիկիայից բերած կանոններին, քանզի Պատմահայրը գրել է. «Ընդ որ ուրախացեալ սրբոյն Գրիգորի, սուղ ինչ գլուխս յինքենէ ի կանոնս ժողովոյն յաւելու, վասն առաւել զգուշութեան իւրոյ վիճակին»: Եթե Պատմահոր հաղորդման համաձայն՝ Լուսավորիչն այդ ավելացումը կատարեց *իր վիճակի* («Վիճակ Թադէի») «առաւել զգուշութեան» համար, ապա, ըստ Ագաթանգեղոսի, նա այդ *լուսավոր կանոնները* ավելացրեց առավել ևս Հայաստան երկիրը լուսավորելու համար: Խորենացին, քանի որ իր շարադրանքում անդրադարձել է նաև զրադաշտականությունից, արիանոսականությունից, այնուհետև նեստորականությունից և այլ աղանդներից եկող վտանգներին, ուստի Լուսավորչի կանոններում տեսել է Հայոց աշխարհի հոգևոր վիճակը օտար միտումներից պաշտպանելու հանգամանքը:

Նիկիայի ժողովը տեղի ունեցավ Հայաստանի համար քաղաքականապես և տնտեսապես բարենպաստ ժամանակաշրջանում, երբ Հռոմեական կայսրության և Սասանյան Իրանի միջև 298 թ. կնքված Մծբինի 40-ամյա խաղաղության պայմագիրը միջազգային կայուն իրավիճակ էր ստեղծել Առաջավոր Ասիայում և Մեծ Հայքի թագավորությունն իր բարգավաճման և հզորացման փուլն էր ապրում: Միևնույն ժամանակ ապագայի մտահոգությամբ, Հայաստանում ծավալվող հոգևոր ընթացքները ուղղված էին աստվածաշնչային ոգով Տիեզերական եկեղեցու մշակած դավանաբանության պաշտպանությանը՝ ազգային հողի վրա թե՛ քրիստոսաբանության անաղարտության և թե՛ կրոնա-գաղափարական խորթ միտումների ներթափանցումներից երկիրը պահպանելու նպատակով:

ՄԵԼԻՔՅԱՆ ԿԱՐԻՆԵ
/ՀՀ ԳԱԱ ՊԻ/

«Narratio de rebus Armeniae»-Ն ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՓԱՍՏԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

1. Հայ եկեղեցու պատմությունը, մասնավորապես նրա V-XIIդդ. միջև ընկած ժամանակաշրջանը, խորապես ներգործություն է կրել Քաղկեդոնի ժողովի նկատմամբ Հայ եկեղեցու դիրքորոշումից: Հայ եկեղեցու պատմության հատկապես VI-VIII դարերը մեծ մասամբ դավանական վեճերի ու պայքարի, դրանց հարթեցման ու վերացման շուրջ գնացած բանակցությունների պատմություն է՝ այդ բոլոր կենտրոնացած լինելով գլխավորապես Քաղկեդոնի ժողովի վրա: Վերաբերմունքը սույն ժողովի նկատմամբ ձևավորում է նաև հայ աստվածաբանական գրականության բնույթն ու կողմնորոշումը:

Սակայն մեր վաղ միջնադարյան մատենագրության մեջ քաղկեդոնական բնույթի երկեր զարմանալիորեն չեն պահպանվել: Հայ եկեղեցու պատմության վաղ միջնադարյան այս շատ կարևոր շրջանը շարադրվում է միայն միաբնակ պատմիչների վկայությունների համաձայն: Բացառություն է կազմում հայ քաղկեդոնական մի եզակի սկզբնաղբյուր՝ «Narratio rebus Armeniae» խորագրով:

2. Քաղկեդոնական դիրքերից շարադրված Narratio-ում առկա են Հայ եկեղեցու պատմության մի շարք կարևոր փաստեր և բազմաթիվ մանրամասներ, որոնք բացակայում են միջնադարյան հայ պատմիչների երկերում: Ամենայն հավանականությամբ, դրանք միտումնավոր կերպով անտեսվել և կամ ձևափոխվել են հայ միաբնակ պատմիչների կողմից: Այս փաստերը, սակայն, վավերացվում են կամ «Գիրք Թղթոց» ժողովածուի որոշ վավերաթղթերի, կամ էլ, խիստ ու աղոտ կերպով, մի քանի հայ պատմիչների աշխատությունների կողմից:

Անգամ երբ քաղկեդոնիկ աղբյուրի հեղինակը շարադրում է այնպիսի փաստեր, որոնց հանդիպում ենք նաև հայ միջնադարյան այլ աղբյուրներում, նա իր հաղորդումների մեջ կատարելապես անկախ է մնում հայ ազգային եկեղեցական պատմագրության ավանդույթից:

ԱՐՄԵՆ ՔԵՇԻՇՅԱՆ
/ՀՀ ԳԱԱ ՊԻ/

ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մամիկոնյանների ծագման խնդրին առանձին քննությամբ կամ անցողակի անդրադարձել են բազմաթիվ ուսումնասիրողներ, հայտնվել են տարբեր կարծիքներ: Ի մի բերելով եղած տեսակետները կարելի է պայմանականորեն բաժանել մի քանի խմբերի.

1. Մի խումբ հետազոտողներ, իբրև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ավանդության համաձայն Մամիկոնյանների նախնիները Հայաստան են եկել Ճենաստանից, Մամիկոնյանների ծագումը պարզելու համար հիմնականում բավարարվել են Ճենաստանի աշխարհագրական տեղորոշումով: Այդպիսով Մամիկոնյանների ծագման խնդիրը նույնացվել է Ճենաստանի տեղորոշման խնդրին, և վերջինիս, ինչպես նաև ճեների էթնիկական պատկանելության որոշման հետ կապված է Մամիկոնյաններին վերագրվել համապատասխան ծագում: Այս խմբի տեսակետները կարելի է բաժանել երկու մասի.

ա/ հետազոտողներ, որոնք ամբողջովին ընդունում են Մամիկոնյանների ծագման ավանդությունը և, գտնելով, որ Ճենաստանը Չինաստանն է, Մամիկոնյաններին վերագրում են չինական ծագում /Մ. Սեն-Մարտեն, Ա. Տ. Օհանյան և այլոք/:

բ/ Հետազոտողներ, որոնք ընդունելով ավանդությունը, գտնում են, որ նրանում նշված Ճենաստանը Չինաստանից տարբեր մեկ այլ երկիր է, և Մամիկոնյանները եկել են այնտեղից՝ Թուրքեստանից /Գ. Փառնակ/, Բակտրիայից /Խ. Վեմյան/, Քաշմիրից և Քաշգարից /Ե. Քասունի/ և այլն:

2. Որոշ հետազոտողներ Մամիկոնյանների ծագման ավանդությունն ընդունում են մասնակիորեն, գտնելով, որ թեև ավանդությունում նշված է Չինաստանի մասին, սակայն իրականում շփոթել են ճեներին մեկ այլ ժողովրդի հետ՝ ճաների /Ն. Ադոնց, Կ. Թումանով/, թյուրքերի՝ /Հ. Սքոլդ/ և այլն:

3. Հետազոտողներ, որոնք լիովին մերժում են ավանդությունը և գտնում, որ Մամիկոնյաններն ունեն իրանական ծագում /Ն. Անդրիկյան, Կ. Տ. Սահակյան և այլոք/:

4. Հետազոտողներ, որոնք Մամիկոնյանների ծագման մասին չտալով վերջնական եզրակացություն, տեսակետներ են արտահայտել միայն նրանց ծագմանն առընչվող առանձին կարևոր հարցերի շուրջ՝ տոհմա-

կան առաջացման, ճենաց թագավորի պատվանունի բացատրության և այլն /Մ. Անանիկյան, Կ. Մլաքեր, Ռ. Բեդրոսյան, Խ. Բալեկջյան և այլն/:
5. Հետազոտողներ, որոնք քննության են առել Մամիկոնյանների ծագման ավանդությունը բանասիրության դիրքերից՝ հիմնականում տեքստային առումով: Քննվել է ավանդության տարբերակների փոխկախվածության աստիճանը, մատենագրության մեջ ավանդության հնագույն աղբյուրը և այլ էական հարցեր /Գր. Խալաթյան, Ա. Մատիկյան, Գ. Աբգարյան և այլոք/:

Մամիկոնյանների ծագման մասին եղած տեսակետների քննության և մեր կատարած ուսումնասիրությունների արդյունքում մենք հանգել ենք այն եզրակացության, որ Մամիկոնյաններն ունեն տեղական, հայկական ծագում:

ՄԵՐԳԵՅ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1826-1828ԹԹ. ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

1. Հայ-ռուսական ռազմական համագործակցության վառ օրինակներ գրվեցին 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում:
2. 1826թ. հուլիսին Աբաս Միրզայի զորքերին համառ դիմադրություն ցուցաբերեց Արցախի հայ բնակչությունը: Շուշիի ռուսական կայազորի հետ հայերը 47 օր հերոսաբար պաշտպանեցին բերդը պարսիկների հարձակումներից: Հայերը նաև մատակարարում էին բերդի կայազորին սննդամթերքով և զենք-զինամթերքով, ապահովում էին կայազորի կապը ռուսական հրամանատարության հետ:
3. Խիզախորեն դիմադրեցին Երևանի Հասան խանի զորքերին Խլի-Ղարաքիլիսայի հայ բնակիչները: Միայն մեծ կորուստների գնով պարսիկներին հաջողվեց կոտրել Խլի-ղարաքիլիսցիների դիմադրությունը: Երևանի խանի զորքերին ուժեղ դիմադրություն ցուցաբերեցին նաև Հարում գյուղի բնակիչները, որոնք մինչև Գյումրիի կայազորից օգնություն ստանալը, յուզբաշի Դելի Ղազարի գլխավորությամբ համառ մարտեր էին մղում թշնամու դեմ:
4. Ռուսական բանակի կազմում առաջիններից մեկը պարսիկների դեմ պայքարի դուրս եկան տեղի բնակչությունից կազմված առաձին կամա-

վորական ջոկատները, նրանց շարքերում աչքի էին ընկել արևմտահայ Մարտիրոս Վեքիլյանի և Շամշադինում հաստատված հայ եպիսկոպոս Գրիգոր Մանուչարյանցի 1803թ. ստեղծած հեծյալ ջոկատները: Լոռի-Փամբակում 1812թ. հայրենական պատերազմի հերոս-պարտիզան գեներալ Դենիս Դավիդովի զորամասի հետ թշնամու դեմ մարտնչում էր Մարտիրոս Վեքիլյանի հեծյալ ջոկատը: Այդ պատերազմի ընթացքում Գրիգոր Մանուչարյանցը մարտեր էր մղում ինչպես ներխուժած պարսկական զորքերի, այնպես էլ ապստամբ թաթարների դեմ Դիլիջանի, Բորչալուի, Ղազախի, Շամշադինի տարածքներում:

5. Երևանյան երրորդ արշավանքը մեծ ոգևորություն առաջ բերեց հայերի մեջ: Սկսվեց հայկական կամավորական ջոկատների կազմավորումը ռուսական կառավարության հովանավորությամբ: Հայկական կամավորական ջոկատների կազմավորման գործը ղեկավարում էր Թիֆլիսի զինվորական նահանգապետ գեներալ Սիպյագինը: Անմիջապես ջոկատների ստեղծման աշխատանքների կազմակերպիչները հայկական ազգային ազատագրական շարժման հայտնի գործիչներ Ներսես Աշտարակեցին և Հարություն Ալամդարյանն էին:

6. Հայ կամավորականների առաջին 117 հոգանոց վաշտը ենթասպա Ամբարյանի հրամանատարությամբ երդում տվեց 1827թ. մայիսի 15-ին Թիֆլիսի Ս. Գևորգ եկեղեցու բակում: Ընդհանրապես կազմավորվեցին մի քանի հետևակային գումարտակներ, ինչպես և հեծյալ ջոկատներ: Առանձին հեծյալ գունդ կազմավորված էր նաև Արցախում: Պետք է հատկապես նշել, որ մեծ թվով հայեր մարտնչում էին վրացական և թաթարական աշխարհազորում, իսկ այսպես կոչված հեծյալ-մուսուլմանական գնդերի կազմում կային առանձին հայկական հարյուրակներ:

7. Հայկական ջոկատները մեծ ներդրում ունեցան Երևանի և Սարդարապատի բերդերի, Նախիջևանի և Ատրպատականի համար մղված մարտերում: Ուշագրավ է, որ հաշտության բանակցություններում առաջին հայկական հեծյալ հարյուրակը կազմում էր Գրիբոեդովի պահակազորը: Հետագայում հայկական միավորումները որոշ ներդրում ունեցան պարսկահայերի դեպի Արևելյան Հայաստան ներգաղթը կազմակերպելու գործում:

8. Բազմաթիվ զինվորներ, սպաներ և գեներալներ պարգևատրվել են շքանշաններով և ստացել են զինվորական աստիճաններ: Որոշ հայկական միավորումներ, որոնք կազմավորվել են 1826-28թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում, հետագայում գործուն մասնակցություն ունեցան 1828-29թթ. ռուս-թուրքական պատերազմին:

ՀԱԿՈԲ ՍՈՒՐՄԱԴՅԱՆ
/ՀՀ ԳԱԱ ՊԻ/

ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ /XVI-XIX ԴԴ. I ԵՐԵՄՆԱՄՅԱԿ/

1. Կարսի նահանգը, որն ընդգրկում էր երբեմնի մեծ Հայքի Այրարատ աշխարհի Վանանդ, Շիրակ /Արևմտյան Շիրակ/, Արշարունիք, Գաբեղյանք գավառները, 16-18-րդ դարերի ընթացքում ենթարկվել է մշտական տարածքային վերաբաժանումների: Բազմաթիվ հայ և օտարալեզու աղբյուրների տվյալներով, այն բաժանվել է 5-9 գավառների, որոնցում հաշվվում էր մոտ 200 գյուղ: Այդ գավառներն էին՝ Փոքր Արդահան, Հոջոջան /Խոջևան/, Զարիշատ, Կեչևան, Կաղզվան, Կարս, Ռահչվան, Շորագյալ /Արևմտյան Շիրակ/, Քյոլե, որոնք տարբեր ժամանակահատվածներում գործածվել են տարբեր արտասանաձևերով:
2. Կարսը հյուսիսից սահմանակից էր Ախալցխայի նահանգի Արդահանի գավառին, արևմուտքից եզերվել է Սողանլուղի և Ալադաշի լեռներով և սահմանակից էր Էրզրումի նահանգի Բասեն, հարավից՝ Բայազետի նահանգի Ալաշկերտ գավառներին: Վերջինիս հետ սահմանագիծն անցնում էր Հայկական պարի մի հատվածով: Արևելքում Շորագյալի /Արևելյան Շիրակ/ տեղամասն էր, որից բաժանվում էր Ախուրյան գետով, իսկ հարավ-արևելքում՝ Սաաթլիի տեղամասն ու Սուրմալուի գավառի Կողբի աղահանքերը՝ վերջիններից բաժանվելով Արաքս գետով:
3. XVII դարում թուրքական վարչական բաժանման համաձայն, Կարսի նահանգում կար 10 կազա /գավառակ/, յուրաքանչյուրում մինչև 8 նահիե /գյուղախումբ/: Նահանգի ընդհանուր կառավարիչը նահանգապետն էր /վալի, բեկլարբեկ, փաշա/, որը նստում էր Կարս քաղաքում: Նրանց զանազան ծառայությունների դիմաց սուլթանի կողմից շնորհվում էր տարբեր աստիճանի պատվատիտղոսներ՝ երկդուղյան կամ եռդուղյան:
4. XIX դարի սկզբին Կարսի նահանգը տրոհվում էր 6 գավառների. Կարս, Կաղզվան, Կեչվան, Զարիշատ, Խուճվան, Շորագյալ: Իսկ նույն դարի 20-ական թվականներին նահանգն արդեն ուներ 5 գավառ՝ 248 գյուղերով: Նրա ընդհանուր տարածքը կազմում էր 9600 քառ. կմ.: Կաղզվանում հաշվվում էր 16, Շորագյալում՝ 56, Զարիշատում՝ 54, Կեչվանում՝ 11, Թախտինում՝ /Կարս/ 111 գյուղ: Վերջինս թեև իր տարածքով ամենափոքրն էր, սակայն մյուս կողմից ամենից խիտ բնա-

կեցվածն էր՝ մեկ քառակուսի կմ-ի վրա ապրում էր 12 մարդ, մինչդեռ մյուսներում այդ ցուցանիշը կազմել է ընդամենը 5-6 մարդ:
5. Բացի վերը նշված բնակավայրերից նահանգի առավել նշանավոր ամրություն կարելի է համարել Մաղաս բերդը, որն ընկած էր Ախուրյանի աջ ափին և Շորագյալի գավառի կենտրոնն էր: 1638թ.-ից մինչև ռուսական տիրապետության սկիզբը՝ 1877թ. բերդն իր գավառով հանդերձ, պատկանում էր հզորությամբ առանձնացող Խաթուն օղլի անունով քրդական ցեղին: XIXդ. առաջին երեսնամյակին նրանց մեջ հատակապես աչքի են ընկնում Մահմադ աղան / Ղարաբեկ/ և նրա եղբայր Մահմեդ փաշան: Քրդական այս ցեղից նշանակվել են նաև Կարսի փաշաներ:
6. Օսմանյան կայսրությունը կայուն վարչական համակարգ չլինելու պատճառով, նահանգները մշտապես ենթարկվել են վերածնումների: Դրանք առաջին հերթին կապված էին հողերի հաճախակի վերաբաժանման, մասամբ նաև աշխարհագրական դիրքի, անձնական ու քաղաքական շահերի հետ:

ԱՆԱՀԻՏ ԽՈՍՐՈԵՎԱ
/ՀՀԳԱԱ ՊԻ/

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐՈՒՄ

1. Տրապիզոնի նահանգը /էյալեթ, վիլայեթ/ Օսմանյան կայսրության հյուսիս-արևելքում ընկած վարչա-տարածքային միավոր էր: 19-րդ դարի սկզբին այն բաղկացած էր 10 սանջակներից՝ Տրապիզոն, Կերասուն, Տրիպոլի, Սյուրմենե, Ունիե, Օֆ, Ռիզե, Ջավրի, Յավեպոլ: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին այն արդեն իր մեջ ներառում էր 4 սանջակ՝ Տրապիզոն, Սամսուն /Ջանիկ/, Լազիստան, Գյումուշխանե, 22 գավառակ և 23 գյուղախումբ՝ 31,3 հազար քառ. կմ տարածությամբ: Քաղաքային բնակչությունը հիմնականում տեղաբաշխված էր Տրապիզոն, Սամսուն, Օրդու, Տրիպոլի, Աքինա քաղաքներում, իսկ գյուղականը՝ Տրապիզոն, Կերասուն, Օրդու գավառակներում:
2. Տրապիզոնը նահանգի կենտրոնն էր, Սև ծովի նավահանգստային նշանավոր քաղաքներից մեկը: 19-րդ դարի առաջին կեսին այստեղ ապրում էին հայեր, հույներ, տաճիկներ /մահմեդականներ/: Տրապիզոնում գործում էր հայկական 3 եկեղեցի և 1 դպրատուն: Քաղաքում

կար 500, շրջակա գյուղերում՝ 1000 հայ տուն բնակչություն: Կաթոլիկ հայերի թիվը կազմում էր մոտ 200 տուն: 1857թ. հայերի թիվը հասավ 4 հազարի, 1882թ.՝ 5,2 հազարի, իսկ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ 14-15 հազարի:

Էլևի ավանը Տրապիզոնի սանջակի վարչական կենտրոնն էր: Տեղի հայ բնակչությունը գաղթել էր Գարահիսարից և Թամզարայից՝ շուրջ 40-60 տուն /250 մարդ/: Բնակչությունը հիմնականում զբաղվում էր հողագործությամբ:

Տրապիզոնի մերձակա գյուղերից էր Անիֆան՝ Ս. Թեոդորոս և Ս. Լուսավորիչ եկեղեցիներով, թաղային վարժարանով: 19-րդ դարի վերջին ուներ 82-87 տուն հայ բնակչություն:

Իվնիա կամ Էվինե քաղաքը՝ 11 հազար բնակչությամբ, որից 800-ը հայեր էին, գտնվում էր Տրապիզոնի ծովեզերքին: Քաղաքում գործում էին Ս. Մինաս եկեղեցին և Մեսրոպյան վարժարանը:

3. Սամսունի կամ Ջանիկի սանջակի խոշոր հայաշատ գյուղերն էին՝ Գոճաման բաշը /գործում էր Ս. Հակոբ եկեղեցին/, Գրպաշցոց-գեղը, Գայատիպին, Կյողջեքյոյը, Ամբար-թեփեն, որոնք ունեին մեկ տասնյակից մինչև 100 տուն հայ բնակիչ:

Սամսունից Օրդու ճանապարհի վրա էր գտնվում Բերշեմպե ավանը՝ 322 տուն բնակչությամբ: Այս սանջակում բնակչությունը հիմնականում զբաղվում էր անասնապահությամբ և երկրագործությամբ:

4. Օրդու գավառակի նշանավոր հայաբնակ գյուղերից էին Գաշ-աղըզը, Գայա-քյոյը, Գաթըրը, Գայիշ Քենթիրլիկը, Կըզըլ Իմամը, Կըզըլ Հիսարը, Կըզըլ Ճյորենը, Կըզըլ-Լիմանը, Գռանը, Գըրման, Ագթամը, Ագբունարը, Աղպելենը:

5. Սյուրմենեի սանջակում առանձնանում էր Այվեն գյուղը: 19-րդ դարի վերջին այստեղ ապրում էր մոտ 120 տուն մահմեդականացած հայ: Զբաղվում էին ծխախոտագործությամբ և անասնապահությամբ: Հայաշատ գյուղեր կային նաև մյուս սանջակներում:

Այսպիսով, ըստ տարբեր աղբյուրների, 19-րդ դարի ընթացքում Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից պետականորեն խրախուսվող և տնտեսական շարժառիթներով թելադրված արտագաղթի պատճառով Տրապիզոնի նահանգի հայ բնակչության թիվը զգալիորեն աճեց: 19-րդ դարի 90-ական թթ. այն կազմեց 47,2 հազար, իսկ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ արդեն 70 հազար:

ՀԱՍՄԻԿ ՀԱՄԲԱՐՅԱՆ
/ՀՀ ԳԱԱ ՊԻ/

ԳՐԻԳՈՐ ՋԱՆՇՅԱՆԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

1. Գրիգոր Ջանշյանը ծնվել է Թիֆլիսում 1851թ. մայիսի 17 /29/-ին: Սկզբում սովորել է տեղի հայկական ծխական դպրոցում, ապա՝ Թիֆլիսի նահանգային գիմնազիայի նախապատրաստական դասարանում: 1864թ. մեկնել է Մոսկվա և ուսումը շարունակել Լազարյան ճեմարանում, որն ավարտել է արծաթե մեդալով: Այնուհետև ընդունվել է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը և ավարտել այն 1874թ.:
2. Գր. Ջանշյանը հրատարակել է մի շարք կապիտալ աշխատություններ, որոնցից հարկ է հիշատակել «Մեծ ռեֆորմների պատմությունից», «Եղբայրական օգնություն Թուրքիայում տուժած հայերին», «Եվրոպայում», «Կովկասի մարգարիտը» և այլն, որոնք լույս են տեսել ռուսերեն XIXդ. 80-90-ական թվականներին: Նրա աշխատություններից կարևոր է նաև «Հայկական հարցը Թուրքիայում» գիրքը, որը հրատարակվել է Մոսկվայում 1893թ. ռուսերեն Գր. Ա. Դիև կեղծանունով /Гр. А. Диев, Армянский вопрос Турции, из переписи с Стамбулским публицистом. Москва, 1893г./:
3. Գր. Ջանշյանը Կ.Պոլսի հրապարակախոսին հղած իր նամակներում քննադատում է թուրքական պաշտոնական այն տեսակետը, որի համաձայն հայերը օսմանյան կայսրությունում ապրում են բարեկեցիկ, իսկ նրանց շարժումները հանդիսանում են մի քանի խառնակիչ անձանց գործողությունների արդյունք: Գիտնականը կոնկրետ փաստերով ցույց է տալիս, որ հայերն այդ երկրում ապրում են ամենադժնդակ պայմաններում: Նրանք կրելով վերնաշերտերի բռնություններն ու հալածանքները, երազում են ազատագրված տեսնել իրենց անձն ու պատիվը, կանանց ու երեխաներին:
4. Գր. Ջանշյանն անդրադառնալով պատմությանը, նշում է, որ հայերն օտարի բռնություններից ազատվելու համար հույս էին կապում Ռուսաստանի հետ: Հայերն օգնեցին ռուսներին 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ կազմելու կամավորական խմբեր և, մտնելով ռուսական զորամասերի շարքերը, կռվեցին պարսիկների դեմ: Շահի այն ահաբեկմանը, թե ռուսները կճորտացնեն ձեզ, հայերը պատասխանեցին, թե «լավ է խոտ ուտենք քրիստոնեական երկրում, քան հաց՝ Պարսկաստանում»:

5. 1878թ. Բեռլինի կոնգրեսով, նշում է Գր. Ջանշյանը, Եվրոպայի վեց տերությունները /Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա և Ավստրո-Հունգարիա/ առաջարկեցին Թուրքիային բարելավել հայերի դրությունը: Սակայն անցել է արդեն 13 տարի, բայց նրանց դրությունը ոչ միայն չի բարելավվում, այլ ավելի է վատացել: Եվ հայերից շատերը ստիպված են արտագաղթել իրենց հայրենիքից ու հաստատվել զանազան երկրներում: Գիտնականը հավանություն չի տալիս նրանց այդ քայլին և գտնում է, որ հայերը պետք է մնան իրենց երկրում և թուրքական կառավարությունից պահանջեն /այլ ոչ թե՝ խնդրեն/ կատարել Բեռլինի կոնգրեսի որոշումը: Չէ որ Հայկական հարցը այլևս Թուրքիայի ներքին հարց չէ, այլ միջազգային հարց է, որի տերն ու տնօրենը Եվրոպայի մեծ տերություններն են:

6. Լինելով սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական հիմնահարցերի խաղաղ լուծման կողմնակից՝ Գր. Ջանշյանը ոչ թե կոչ էր անում իր հայրենակիցներին ապստամբության կամ հեղափոխության, այլ պահանջում էր օսմանյան իշխանություններից բարելավել իրենց կացությունը: Ընդգծում էր, որ նրանք պարտավոր են կատարել դա, մանավանդ, երբ Հայկական հարցն արդեն դուրս է եկել Թուրքիայից և դարձել միջազգային հարց:

Ցավոք, Գր. Ջանշյանը, բարելավում ասելով, ընդգծում էր գերազանցապես հայոց կրոնի ու լեզվի անձեռնմխելիությունը, անձի ու գույքի ապահովումը, սակայն չէր նկատում, որ այդ ամենի իրագործման համար անհրաժեշտ էր երկրում անցկացնել սոցիալ-տնտեսական ու հասարակական արմատական փոփոխություններ:

Այդուհանդերձ, հեղինակի սույն աշխատությունն արժեքավոր է: Այն մինչև այժմ չի կորցրել իր գիտական հետաքրքրությունը: Մասնագետները, անդրադառնալով արևմտահայերի XIX դ. պատմության հարցերին, հաճախ են օգտագործում նրա նյութերն ու եզրակացությունները:

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ
/ՀՀ ԳԱԱ ՊԻ/

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՄՆ-ՈՒՄ

1. Ամերիկահայ հատվածի եկեղեցական կյանքը, որպես հավաքական ամբողջություն, ձևավորվել ու զարգացել է Նոր Երկրում հայության թվի հետզհետե ստվարացմանը զուգընթաց և էական առաջխաղացում ունեցել հասարակական-տնտեսական ու պատմաքաղաքական հանգամանքների բերումով ԱՄՆ-ում հայերի հետագա հիմնավորմանը համաքայլ:
2. Սկզբնական շրջանում հայ հոգևոր կյանքն ԱՄՆ-ում նախապատրաստական վիճակում էր: Նոր Երկրում ազգային եկեղեցի ունենալու պահանջն առավել խիստ է զգացվել XIX դ. 80-ական թվականներից սկսած, երբ ժամանակավոր, հետ վերադառնալու հույսով մեկնած անհատ հայ պանդուխտներին աստիճանաբար փոխարինելու են եկել ընտանիքներով, հիմնավորվելու մտադրությամբ ժամանածները՝ իրենց հետ բերելով ընտանեկան ծիսակարգի (ամուսնություն, մկրտություն, հուղարկավորություն և այլն) պահպանման անհրաժեշտություն:
3. Նախքան պաշտոնական եկեղեցի ունենալը, ԱՄՆ-ի հայերից շատերն իրենց հոգևոր մխիթարությունը գտնում էին ամերիկյան եկեղեցիներ, հատկապես ավետարանական ժողովարաններ հաճախելով, որտեղ քարոզում էին ինչպես օտար, այնպես էլ հայազգի պատվելիներ: Արդեն 1880-ական թվականների սկզբին, այսինքն՝ ԱՄՆ-ում հայերի թվի աստիճանաբար ստվարացման հետ մեկտեղ, ազգային անհատ նվիրյալների ջանքերով ստեղծվել են կրոնական հավաքատեղիներ: Ամերիկահայ առաջին աղոթատեղին՝ ավետարանական Մարտիրոսաց հայ ժողովական եկեղեցին հիմնվել է 1881թ. Ուստրում: Հետագայում՝ 1891 թ. այնտեղ հիմնվել է ամերիկահայ առաքելական առաջին Սբ. Փրկիչ եկեղեցին, 1910 թ. Նյու Յորքում՝ ամերիկահայ կաթողիկե առաջին եկեղեցին:
4. Երկրի հայաբնակ վայրերում ազգային եկեղեցիների հաստատումով 1898 թ. գաղութում հիմնվել է Ամերիկայի հայ եկեղեցու թեմը՝ 30 համայնքներով, իսկ Ուստրի Սբ. Փրկիչ եկեղեցին վեր է ածվել Առաջնորդարանի՝ Հովսեփ եպիսկոպոս Սարաջյանի գլխավորությամբ (1923 թվականից Առաջնորդարանը փոխադրվել է Բոստոն, իսկ 1927 թվականից մինչև օրս՝ Նյու Յորքում է, իսկ 1928 թ. Կալիֆորնիայի տարածքը պաշտոնապես անջատվել է ամերիկահայ եկեղեցիների Արևելյան թե-

մից՝ ստեղծելով Արևմտյան թեմ՝ իր Առաջնորդարանով):
Երկրով մեկ տարածված ամերիկահայ ավետարանական եկեղեցիները ևս միավորվել են՝ ստեղծելով միջեկեղեցական կազմավորումներ (1901թ. Ուստրում՝ ԱՄՆ-ի Արևելյան նահանգների հայ ավետարանական եկեղեցիների միությունը, 1908 թ. արևմտակողմի՝ Կալիֆորնիայի հայ ավետարանական եկեղեցիների միությունը): Արդեն 1919 թ. ԱՄՆ-ում կար հայ առաքելական 15, ինչպես նաև ավետարանական՝ 15 եկեղեցի և շուրջ 20 առաքելություն:
5. ԱՄՆ-ի հայաշատ տարբեր քաղաքներում կազմավորված հայ եկեղեցիներն իրենց հոգևոր առաջնորդների, հովիվների, համայնքի կարող ուժերից բաղկացած հոգաբարձուների խորհուրդների, առանձին բարերարների ու անհատ հայերի ջանքերով հնարավորությունների ներածին չափով հոգացել են թեմերի հոգսերն ու կարիքները, պարբերաբար իրականացվել են երկրի տարբեր քաղաքներով մեկ ցրված հայրենակիցների մարդահամարներ, ձեռնամուխ են եղել օտարության մեջ խարխափող հայության ազգային նկարագրի պահպանմանն ու հայանպաստ այլ գործունեության: Երկրի գրեթե բոլոր հայ եկեղեցիներում ստեղծվել են հայաշունչ գրադարաններ, որոնք ժամանակի ընթացքում հարստացվել են հայրենիքից բերված, ինչպես նաև համայնքի նվիրաբերած գրականությամբ ու մամուլով, եկեղեցիներին կից բացվել են կիրակնօրյա, ավելի ուշ՝ նաև ազգային ամենօրյա դպրոցներ: Ամերիկահայ եկեղեցիներն իրենց համայնքների կրոնական հարցերը հոգալուց բացի, զգալի ներդում են ունեցել նաև գաղութի ազգային-կրթական մակարդակը բարձրացնելու, օտարացման աճող վտանգի դեմ տեղի հայ երիտասարդությանը համախմբելու, հայրենիքին ու ժողովրդին սատարելու և հայանպաստ այլ ձեռնարկների կազմակերպման ու իրականացման գործում:
6. Այսպիսով, ամերիկահայ եկեղեցին իր հարանվանական ճյուղավորումներով, միմյանցից անկախ ու, միաժամանակ, միասնաբար, որպես գաղութի հոգևոր կյանքում առանցքային դեր ու նշանակություն ունեցող ազդակ, գնահատելի աշխատանք է ծավալել ամերիկահայության շրջանում ազգային ոգին ու նկարագիրը, ավանդույթներն ու սովորույթները, վարքն ու բարքը, հեռավոր հայրենիքի ու ժողովրդի հետ կապն ամուր պահելու ուղղությամբ, հոգևոր, բարոյական ու նյութական նպաստ բերել ինչպես գաղութի, նույնպես և հայրենի երկրի հայությանը՝ վճռորոշ դեր ու նշանակություն ունենալով ամերիկահայ գաղութի կազմակերպման ու հայապահպանման գործում:

ՄԱՐԻԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ/

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԻՑ ՀԵՏՈ

1. 1908թ. հուլիսին Թուրքիայում սահմանադրության վերահաստատումից հետո Գրիգոր Զոհրապը վերադարձավ Կ. Պոլիս, որտեղից ստիպված էր եղել հեռանալ հետապնդումների պատճառով:

Վերադառնալով ոչ միայն իր առջև բաց գտավ թուրքական դատարանները, այլև հրավիրվեց դասավանդելու Օսմանյան իրավագիտական համալսարանում:

2. Սահմանադրական կարգերով ոգևորված՝ Զոհրապը որոշում է «Նոր օր» անունով լրագիր հրատարակել, որը, իր համոզմամբ, պետք է դառնար ազգային իրավունքների պաշտպանության արդյունավետ գործիք:

Իթթիհատականների հետ համագործակցելու քաղաքական կազմակերպության անհրաժեշտությունից ելնելով նա հիմնեց Օսմանյան սահմանադրական ակումբը, որը սակայն չդարձավ իր ակնկալած քաղաքական կուսակցությունը: Ուստի, սկզբնական շրջանում որոշակի հույսեր կապեց Հ. Հ. Դաշնակցության հետ:

3. Պոլսի վեց մեծ թաղամասերից Զոհրապն առաջադրվեց Ազգային ժողովի երեսփոխան, 1908թ. նոյեմբերին ընտրվեց Օսմանյան խորհրդարանի պատգամավոր /մեբուս/:

Իբրև մեբուս նա ամենագործուն մասնակցություն ունեցավ խորհրդարանական գրեթե բոլոր բուռն քննարկումներին, հանդես եկավ ընդարձակ ճառերով, որոնք վերաբերում էին ժողովների և միտինգների ազատությանը, ուղղակի և անուղղակի հարկերը թեթևացնելուն, գյուղացիության վիճակը բարելավելուն, առհասարակ երկրի իրավական, քաղաքական և մշակութային կյանքը բարեփոխելուն:

4. Սահմանադրական խանդավառությունների ալիքով դեռ պարուրված էին հայերը, երբ Ազգային ժողովի նիստի ժամանակ կրկին բարձրացվեց գավառային հարստահարությունների հարցը: Զոհրապն առաջարկում է ճշտել եղելությունը կառավարության կողմից կազմվելիք հանձնաժողովի միջոցով. նա դեռ հավատում էր Իթթիհատին:

5. 1909թ. Ադանայի կոտորածներից հետո շատերը սթափվեցին, այդ թվում և Զոհրապը:

Կիլիկիայի ջարդերի առթիվ պառլամենտում ունեցած իր ելույթում նա խստորեն քննադատեց իթթիհատական կառավարության

համիդյան մեթոդները և պահանջեց, որ ջարդարարները, ինչպես և մեղսակիցները՝ պատժվեն:
6. Իթթիհատականներից հուսախաբված և ազգային բնաջնջման սպառնալիքից տագնապած հայերը դարձյալ ապավինեցին բարեփոխումների վերաբերյալ եվրոպական տերությունների երաշխիքներին: Ազգային ժողովի 1917թ. դեկտեմբերի 21-ի փակ նիստում կազմվեց «Անվտանգության կոմիտե», որը պետք է զբաղվեր վերոհիշյալ խնդրով: Կոմիտեի աշխատանքներին պետք է աջակցեր Զոհրապը:

Դիմելով շատ երկրների դեսպանատների, նա ի վերջո հույսերը կապեց Ռուսաստանի հետ, որն էլ Բ. Դռան հետ համաձայնեցրեց հայկական բարենորոգումների ծրագիրը /1914թ. հունվար/: Սակայն շուտով սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը, և ռուս-թուրքական պայմանագիրը մնում է թղթի վրա: Շուտով երկրում ծայր են առնում ծերբակալումները, աքսորներն ու կոտորածները: Զոհրապն ամեն ջանք և միջոց է գործադրում կանգնեցնելու աղետը: Նա մերժում է Պոլսից հեռանալու առաջարկը և նախընտրում նահատակությունը:

ՀՈՎԱԿԻՄ ԲՈՅԱՋՅԱՆ

ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

1. 1908թ. երիտթուրքական հեղաշրջումը չարդարացրեց հայերի՝ ոտնահարված իրավունքների վերականգման և անձի, գույքի, պատվի անձեռնմխելիության ապահովության հույսերը: Երիտթուրքերն արևմտահայության նկատմամբ վարեցին բիրտ ու դաժան քաղաքականություն՝ վերջնական նպատակ ունենալով նրանց ֆիզիկական ոչնչացումը: Այս իրավիճակում է, որ 1913թ. հայկական վիլայեթներում բարենորոգումներ կատարելու հարցը նորից դառնում է մեծ տերությունների քննարկման առարկա:
2. Եթե 1890-ական թթ. Ռուսաստանը բացասական դիրք գրավեց արևմտահայերի արդարացի պահանջների նկատմամբ, ապա 20-րդ դարի սկզբներին զգաց նրանց անհրաժեշտությունը դեպի հարավ իր հետագա առաջխաղացման համար: Այդ իսկ պատճառով ցարական կառավարությունը շտապեց իր ձեռքը վերցնել բարենորոգումներ անցկացնելու նախաձեռնությունը՝ հատկապես տեսնելով Գերմանիայի շահագրգռվածությունն այս խնդրում: Սակայն սրա հետ մեկտեղ Ռուսաստանը, հաշվի

առնելով բարդ քաղաքական իրավիճակը, չէր պատրաստվում գրավել Արևմտյան Հայաստանը:

19-րդ դարի վերջերին Գերմանիան որդեգրեց «Գրոհ դեպի Արևելք» պաշտոնական քաղաքականությունը: Սրա մեջ տեղ էր հատկացվում Թուրքիային, որն էլ աստիճանաբար ենթարկվեց Գերմանիայի տնտեսական և ռազմա-քաղաքական ազդեցությանը: Որպես Օսմանյան կայսրության մի մաս աչքաթող չէր արվել նաև Արևմտյան Հայաստանը, որը կարող էր օգտագործվել որպես պատնեշ Ռուսաստանի հետագա առաջխաղացման դեմ: Հենց այս շահերից ելնելով էլ Գերմանիան մի կողմից դեմ էր հայկական վիլայեթներում արմատական բարենորոգումների իրականացմանը, սակայն մյուս կողմից փորձում էր իր կողմը գրավել արևմտահայությանը:

Անգլիական դիվանագիտությունը խիստ մտահոգված էր իր գաղութային տիրապետության անվտանգությամբ և ամեն կերպ ցանկանում էր խոչընդոտել Գերմանիայի առաջխաղացմանը, ինչպես նաև թույլ չտալ Ռուսաստանի դիրքերի ամրապնդումն Արևմտյան Հայաստանում, որը կսպառնար նրա քաղաքական և տնտեսական նկրտումներին Մերձավոր և Միջին Արևելքում:

Օսմանյան կայսրության ամբողջականության պաշտպանությամբ հանդես էր գալիս նաև Ֆրանսիան, քանի որ Թուրքիայի անդամահատումը լուրջ վտանգ կստեղծեր նրա շահերի համար Մերձավոր Արևելքում՝ գլխավորապես Գերմանիայի կողմից: Բացի այդ Ֆրանսիան այստեղ ուներ հսկայական դրամական ներդրումներ:

Ավստրո-Հունգարիան և Իտալիան նույնպես իրենց դաշնակից Գերմանիայի նման դեմ էին Արևմտյան Հայաստանում Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանը:

3. Այսպիսով, մեծ տերությունների շահերը խնդրո առարկա ժամանակաշրջանում թելադրում էին Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման անհրաժեշտությունը, հատկապես նրա արևելյան շրջաններում: Սակայն Թուրքիայի եվրոպական մասի կորուստը ցույց տվեց, որ անհրաժեշտ են լուրջ ձեռնարկումներ կայսրության մյուս մասերը նման ճակատագրից հեռու պահելու համար: Այս հանգամանքը որոշ չափով նպաստեց հայկական վիլայեթներում բարենորոգումներ մտցնելու հարցի քննարկմանը: Այստեղ էլ ի հայտ եկան մեծ տերությունների բռնած դիրքորոշումները, և նրանցից յուրաքանչյուրը ձգտեց այս խնդիրն օգտագործել իր նպատակների համար: Արդյունքում 1914թ. հունվարի 26-ին կնքվեց ռուս-թուրքական համաձայնագիր բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ, որը, սակայն, բռնկված I աշխարհամարտի հետևանքով, մնաց անիրագործելի:

Ա II 86/145

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՂԱՄԲԱՐՅԱՆ
/ՀՀ ԳԱԱ ՊԻ/

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ ԵՎ ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ
/1912Թ. ՎԵՐՋ-1913Թ. ՍԿԻԶԲ/

1. 1908թ. երիտթուրքական հեղափոխության և Օսմանյան սահմանադրության վերահաստատումից հետո ևս արևմտահայությունն արյունալից տարիներ էր ապրում: Իշխանության եկած երիտթուրքերը որդեգրել էին սուլթան Աբդուլ Համիդի ռեակցիոն քաղաքականությունը:

Իրավիճակը հայկական վիլայեթներում խիստ սրվել էր 1911-1912թթ.՝ իտալա-թուրքական պատերազմի ընթացքում: Դրան հաջորդող Բալկանյան առաջին պատերազմը /1912թ. հոկտեմբեր-1913թ. մայիս/ էլ ավելի բարդացրեց դրությունը: Ամենուրեք անիշխանություն էր տիրում: Բռնություններն արևմտահայության շարունակվում էին: Ավելի սրվեցին հողային և կրոնական հակասությունները:

Ստեղծված հակահայկական շովինիստական մթնոլորտն անհանգստացնում էր հայ ազգային-քաղաքական ուժերին և նրանց ստիպում փրկության ուղիներ փնտրել հայ ժողովրդի համար: Հայկական հարցը կրկին հանդես եկավ իր արդիականությամբ:

Բալկանյան ժողովուրդների հաջողությունները ոգևորել և հույս էին ներշնչել արևմտահայությանը: Չլուծված Հայկական հարցի վերաբացման համար բարենպաստ նախադրյալներ էին ստեղծվել /Թուրքիայի պարտությունը և Բալկանյան առաջին պատերազմի արդյունքների նկատմամբ մեծ տերությունների ցուցաբերած հետաքրքրությունը/: Կար նաև հաջողության մի մեծ գրավական՝ ռուսական դիվանագիտության բարյացակամ վերաբերմունքը Հայկական հարցի նկատմամբ, որը բխում էր Ռուսաստանի շահերից:

2. 1912թ. հոկտեմբերի 15-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ 5-ը, դիմելով ռուսական կայսրին՝ արևմտահայությանը պաշտպանելու խնդրանքով, սկսեց պաշտոնական բանակցությունները: Ավելի ուշ՝ 1912թ. նոյեմբերին, Եվրոպայում կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչ նշանակված Պողոս Նուբարին հանձնարարվեց հուշագիր պատրաստել Լոնդոնի դեսպանաժողովին ներկայացնելու համար: Գևորգ 5-րդի հանձնարարության համաձայն 1912թ. դեկտեմբերի վերջին-1913թ. հունվարի սկզբին Մեծ Բրիտանիայի հայ համայնքի անունից աղերսագրեր ուղղվեցին Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Ավստ-

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

ռո-Հունգարիայի, Իտալիայի և ԱՄՆ-ի վեհապետերին, արտգործնախարարներին և եկեղեցական առաջնորդներին: Հայերը դիմում էին Բեռլինի դաշնագիրն ստորագրած բոլոր տերություններին՝ Հայկական հարցի լուծումը կրկին իրենց ձեռքը վերցնելու խնդրանքով:
3. Պաշտոնական Անգլիան, ստանալով աղերսագրերը, որևէ ակտիվություն չցուցաբերեց Հայկական հարցի վերաբացման վերաբերյալ: Անգլիական կառավարությունը չէր ընդունել նաև Ռուսաստանի կողմից կատարված Հայկական հարցի շուրջ ընդհանուր հայեցակետ և համերաշխ գործողությունների սահմանման առաջարկը: Բանն այն է, որ անգլիական կառավարության համար Հայկական խնդրի արծարծումն օրվա խնդիր չէր: Թուրքայում Անգլիայի ռազմաստրատեգիական ու առևտրատնտեսական շահերն ապահովելու և ծրագրերն իրականացնելու համար Արևմտյան Հայաստանի բարենորոգումների իրագործումն անհրաժեշտություն չէր համարվում: Ինչ վերաբերում էր արևմտահայության սոսկալի վիճակին, ապա Անգլիայի արտգործնախարարությունում տիրում էր այն կարծիքը, որ Անգլիան ոչինչ չէր կարող անել ի պաշտպանություն Փոքր Ասիայի հայ բնակչության և, հավատալով, թե Բ. Դուռը կպաշտպանի հայերին, արդարացի էր համարում ժամանակ տալ թուրքական կառավարությանը զբաղվելու առավել կարևոր, անհետաձգելի խնդիրներով և թուրքերին չանհանգստացնել այլ հարցերի կապակցությամբ:
4. Հայկական հարցի վերաբացման հանդեպ անգլիական կառավարության խուսափողական դիրքը բացատրվում է մի շարք հանգամանքներով. 1/ բալկանյան խնդիրների լուծմանը տրվող կարևորությամբ և առաջնահերթությամբ, 2/ Թուրքիայի հետ հարաբերությունների ամրապնդման և զարգացման ցանկությամբ, 3/ Թուրքայում դեռ որոշ չափով պահպանված Անգլիայի ազդեցության խորացման ձգտումով և 4/ որ ամենակարևորն էր, Օսմանյան կայսրության փլուզման երկյուղով: Անգլիացիները համոզված էին, որ Հայկական հարցի արծարծումն ավելի կբարդացներ Թուրքիայի ծանր վիճակը և կարող էր նպաստել եվրոպական տիրույթների հետ մեկտեղ նաև Օսմանյան կայսրության ասիական տարածքների անջատմանը, ինչը չէր համապատասխանում Մեծ Բրիտանիայի շահերին:
5. Անգլիական դիվանագետները, Օսմանյան կայսրության ամբողջականության հետ կապելով Հայկական հարցը, ստեղծված միջազգային պայմաններում /1912թ. վերջ-1913թ. սկիզբ/ խուսափում էին Հայկական հարցի քննարկմանը միջազգային բնույթ հաղորդել: Այդուհանդերձ, տեսնելով իր ախոյանների՝ դաշնակից Ռուսաստանի և հակառակորդ Գերմանիայի շահագրգռվածությունը Հայկական հարցում, անգլիական կառավարությունն ստիպված էր հրաժարվել պասիվությունից և, շարու-

նակելով սեփական շահերի տեսանկյունից դիտարկել խնդիրը, մշակված ակտիվություն ցուցաբերել Հայկական հարցի կապակցությամբ:

ՎԱՐԴԱՆ ԽԱՌԱՏՅԱՆ
/ՀՀ ԳԱԱ ՊԻ/

1917 Թ. ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ցարիզմի վարած քաղաքականությունն Անդրկովկասի հանդեպ խարսխված էր «բաժանիր որ տիրես» գաղութատիրական սկզբունքի վրա: Այդ իսկ պատճառով վարչատարածքային բաժա-նումները երբեք չէին կատարվում պատմաազգագրական սկզբունքների հաշվառումով, իսկ վարչական միավորներն էլ զուրկ էին ազգային պատկանելիության որևէ անվանումից: Այդ քաղաքականությունից էապես տուժում էր հայ ժողովուրդը, որի պատմական որոշակի տարածքներ, գերակշիռ հայ ազգաբնակչությամբ, կցվել էին վրացական և թաթարական վարչական միավորներին /Ախալքալաք, Լոռի, Ղարաբաղ, Զանգեզուր/ և արդյունքում Անդրկովկասի 55 գավառներից միայն հինգում հայերն ունեին մեծամասնություն: Այդ իսկ պատճառով, հայերն ավելի մեծ շահագրգռություն ունեին Անդրկովկասի վարչական նոր վերաբաժանման խնդրում և մեծ խանդավառությամբ լցվեցին այդ գործին:
2. Ռուսաստանյան 1-ին հեղափոխությունից հետո Անդրկովկասի վարչական նոր վերաբաժանման խնդիրը դարձավ օրակարգի հարց: Քննարկումներ տեղի ունացան 1909 և 1916թթ. խորհրդակցություններում, սակայն հասկանալի պատճառներով հայ ներկայացուցիչները, որոնք առաջ էին քաշում սահմանների փոփոխման հարցերը, իրենց առաջարկությունները հիմնավորում էին տնտեսական բնույթի փաստարկներով: Փետրվարյան հեղափոխությունից հետո հարցի քննարկումներն ակտիվացան: Պետրոգրադում և այնուհետև Թիֆլիսում տեղի ունեցած խորհրդակցություններում հայ ներկայացուցիչները /Ա. Խատիսյան և Ավ. Շահխաթունյան/ քննարկման ներկայացրին Անդրկովկասի վարչական վերաբաժանման բավականին մշակված մի նա-

խագիծ, որի հիմքում թեև ընկած էր գլխավորապես ազգագրական սկզբունքը, այնուամենայնիվ չէին անտեսվում նաև այլ որոշիչ գործոններ՝ պատմական, բնակլիմայական, տնտեսական, կենցաղային:
3. Համաձայն այդ նախագծի Անդրկովկասը պետք է բաժանվեր ազգային երեք շրջանների՝ վրացական, թաթարական և հայկական: Հայկական շրջանն իր հերթին բաժանվում էր երեք նահանգների՝ Ալեքսանդրապոլի, Գանձակի և Երևանի, կազմված համապատասխան թվով գավառներից /15/: Հայկական շրջանի մեջ էին ներառված Երևանի նահանգն ամբողջությամբ, Կարսի և Կաղզվանի օկրուգները, Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի և Բորչալուի գավառները, ինչպես նաև Ելիզավետպոլի նահանգի արևմտյան շրջանները՝ Ղարաբաղը և Զանգեզուրը: Ըստ նախագծի այդ տարածքը պետք է կազմեր 62,5 հզ. կմ^2, 2147 հզ. բնակչությամբ, որից հայերը՝ 1315 հզ. /61%/, մահմեդականները՝ 610 հզ. /28%/ և այլ ազգ.՝ 222 հզ. /11%/: Նախագիծը ոչ միայն միավորում էր Անդրկովկասի պատմական հայկական հողերը, այլև իր մեջ էր ներառում տարածաշրջանի հայ ազգաբնակչության 3/4-ից ավելին: Դրանով իսկ անհիմն էին դառնում հայերի ցրվածության մասին պատճառաբանությունները: Բոլշևիկյան հեղաշրջումից հետո նախագիծը միառժամանակ մոռացության տրվեց:
4. Անկախության հռչակումից հետո, երբ Անդրկովկասյան հանրապետությունների միջև ճշգրիտ որոշված սահմաններ չկային, և Վրաստանն ու Ադրբեջանը տարածքային պահանջներ էին ներկայացնում, Հայաստանի կառավարությունն առաջարկեց սահմանային վեճերը կարգավորել համաձայն վերոհիշյալ նախագծի և ուղղությամբ պայքար ծավալեց:

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
/ՀՀ ԳԱԱ ՊԻ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

1. Հայաստանի, որպես անկախ հանրապետության կայացման համար, անկախության հռչակումից հետո, առաջնահերթ էր կառավարության և պառլամենտի ձևավորումը: Բաթումի պայմանագրի կնքումից անմիջա-

պես հետո սկսվեցին գործադիր և օրենսդիր իշխանության մարմինների ձևավորումը:

Բաթումի պայմանագրի կնքումից անմիջապես հետո սկսվեցին կառավարության և պառլամենտի կազմավորման աշխատանքները, որոնք ընթացան քաղաքական խիստ լարված մթնոլորտում: Այդ ուղղությամբ որոշում կայացվեց, որ կառավարության և հրավիրվելիք խորհրդարանի գործունեության համար հիմք պետք է ծառայի կուսակցական սկզբունքը:

ՀՀ անկախության հռչակումից հետո հայ քաղաքական կուսակցությունների միջև կառավարության կազմավորման շուրջ հանդես եկան լուրջ տարաձայնություններ, անգամ միջկուսակցական բախումներ:

Հ. Քաջազնունուն գործադիր իշխանության նախագահ նշանակելու Հայոց ազգային խորհրդի որոշմանը ընդդիմացան հատկապես Հայ ժողովրդական կուսակցության /ՀԺԿ/ներկայացուցիչները, որոնք ցանկություն ունեին այդ պաշտոնում տեսնել թեկնածու Մ. Պապաջանյանին: Ավելին, նրանք պահանջում էին առհասարակ Դաշնակցության հեռացումը քաղաքական ասպարեզից՝ որպես հեղափոխականների ու սոցիալիստների, նման դեպքում, ըստ ժողովրդականների թե՛ Թուրքիան, թե՛ Գերմանիան կունենային ավելի մեծ վստահություն Հայաստանի նկատմամբ:

2. Հայ ժողովրդականների կողմից դաշնակցությանը քննադատության էր ենթարկվում նաև Հայաստանի ճակատագիրը համաշխարհային պատերազմի և ռուսական հեղափոխության հետ կապելու հարցում: Դաշնակցական մամուլն էլ իր հերթին /«Հորիզոն», «Աշխատավոր», «Լրաբեր» և «» / փոխադարձ մեղադրանքներով հանդես էր գալիս ՀԺԿ-ի դեմ: Դաշնակցականները նշում էին, որ եթե իրենք սխալ են գործել, ապա դրանում մեղքի իրենց բաժինն ունեն ՀԺԼ-ի անունից հանդես եկող այն գործիչները, որոնք համալրել են Ազգային Բյուրոն և դաշնակցության հետ համատեղ փորձում են վճռել հայ ժողովրդի ճակատագիրը:

Միջկուսակցական այդ պայքարում կառավարության նախագահի և նախարարական պաշտոնների միակ հավակնորդն էր իրեն համարում Սոցիալիստ հեղափոխականների /էսէռ/ կուսակցությունը, գտնելով, որ ինքը միակ ոչ ագրեսիվ և թուրքերի կողմից խիստ սիրված կուսակցությունն է: /«Աշխատանքի դրոշակ» հուլիս 1918/: Այդ տեսակետը ևս սուր քննադատության ենթարկվեց՝ սոցիալիստ հեղափոխականներին անվանելով քաղաքական որոշակի ուղի չունեցող և անդեմ քաղաքական ուժ:

Հայոց Ազգային խորհրդի հաջորդ քայլը կառավարման օրենսդիր մարմնի ձևավորումն էր: Որոշվեց Հայաստանի ապագա խորհրդա-

րանն անվանել «Հայաստանի խորհուրդ», որը կազմվեց Ազգային խորհրդի կուսակցական անդամների, ինչպես նաև հանրապետությունում ապրող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների միջոցով համապատասխան համամասնությամբ:

Ինչպես այնուհետև պարզ դարձավ և' կառավարությունը, և' խորհրդարանը չէին արտահայտում երկրում տիրող քաղաքական ուժերի իրական համամասնությանը:

Այս փաստն ստիպված էին ընդունել բոլոր կուսակցությունները, թեև դրա վերաբերյալ անդրկովկասյան և սփյուռքահայ մամուլում հրապարակված մեկնաբանությունները խիստ հակասական էին:

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
/ՀՀ ԳԱԱ ՊԻ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՄՈՒԼԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՄԲ

Անդրկովկասյան մամուլը բավական հարուստ տեղեկություններ է պարունակում Հայաստանի հանրապետության /1918-1920թթ./ առաջին խորհրդարանի և կառավարության կազմավորման, նրանց գործունեության և միմյանց հետ ունեցած փոխհարաբերությունների վերաբերյալ:

1. Ինչպես հայտնի է, Հայաստանի առաջին խորհրդարանը և Հայաստանի առաջին կառավարությունը ստեղծվեցին քաղաքական լարված մթնոլորտում և չէին արտահայտում երկրի կուսակցական ուժերի իրատեսական համամասնությունը: Հայաստանի օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների միջև առաջին լուրջ հակասություններն ի հայտ եկան 1918թ. աշնանը:

2. Կառավարությունը սուր քննադատության էր ենթարկվում խորհրդարանում: Դժգոհության հիմնական պատճառն այն էր, որ երկրում շարունակում էր տիրել սոցիալ-տնտեսական և քաղաքական բարդ իրավիճակ՝ ծանր կացության մեջ էր գաղթականությունը, բարձիթողի վիճակում էր ժողովրդի պարենավորումը: Երկրի ֆինանսական դրությունն անբավարար էր, քանի որ պետական գանձարանը հարստացնելու միակ միջոցը հարկերի՝ եկամտային տուրքի գանձումն էր, այն էլ 1910թ.

ընդունված կարգով, որը բոլորովին իրեն չէր արդարացնում տվալ պայմաններում: Վարչապետ Հ. Քաջազնունու բնորոշմամբ՝ երկիրն իրենից ներկայացնում էր «ավերակների կույտ ու անձև քաոս»:
3. Հայաստանի խորհուրդը ևս ոչ մի շոշափելի աշխատանք չէր կատարում: Այն փաստորեն անգործության էր մատնված: Կառավարությունը 1918թ. աշնան սկզբներին արդեն հայտնվել էր ծգնաժամային վիճակում, սակայն նախարար-նախագահ Հ. Քաջազնունին հրաժարական չէր ներկայացնում խորհրդարանին, այլ բանակցություններ էր վարում խորհրդարանական խմբակցությունների հետ՝ նոր կոալիցիոն կառավարություն ստեղծելու շուրջ:
4. Քաղաքական ուժերը, սկսեցին որոշ ակտիվություն ցուցաբերել 1918թ. աշնան կեսերին, երբ հորիզոնում ուրվագծվում էր Գերմանիայի և նրա դաշնակից Թուրքիայի պարտությունը, և Հայաստանում նշմարվում էին կայունության նշաններ:

Հայ ժողովրդական կուսակցության /ՀԺԿ/ ներկայացուցիչները համաձայնություն հայտնեցին մասնակցել կոալիցիոն կառավարության ստեղծմանը, պայմանով, եթե իրենց տրամադրվի նախարարական պաշտոնների կեսը: Շուտով այդ կառավարությանը ցանկացան անդամակցել նաև սոցիալ-դեմոկրատներն ու էսէռները: Առաջինները հավակնում էին ստանալ արտաքին և ներքին գործերի նախարարների պաշտոնները: Սակայն, որոշ ժամանակ անց, և՝ սոցիալ-դեմոկրատները, և՝ էսէռականները հրաժարվեցին ստեղծվելիք այդ կառավարության մաս կազմել: Այդ վիճակը բխում էր ՀՀԴ-ի շահերից, քանզի այն չէր ցանկանում կառավարությունում իր կողքին տեսնել ծախ ուժերի ներկայացուցիչներին: ՀԺԿ-ի հետ համագործակցելու դաշնակցականների պատրաստակամությունը պայմանավորված էր արտաքին քաղաքականության մի շարք հարցերում միանման մոտեցումներով:
5. Խորհրդարանի 1918թ. նոյեմբերի 4-ին գումարված նիստում վարչապետ Հ. Քաջազնունին ներկայացրեց կառավարության հրաժարականը՝ խորհրդարանի և կառավարության միջև ստեղծված նմանատիպ հարաբերությունների մթնոլորտում անհնարին համարելով կառավարության հետագա աշխատանքը: Խորհրդարանում այս կապակցությամբ տեղի ունեցած քննարկումների արդյունքում ձայների մեծամասնությամբ ընդունվեց կառավարության հրաժարականը և Հ. Քաջազնունուն տրվեց կոալիցիոն սկզբունքով նոր կառավարություն ձևավորելու հանձնարարականը:

ՅՈՒՐԻԿ ՂՈՒԼՅԱՆ
/ԵՊՀ/

ՀԱՅ - ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ
/ԲԱՔՈՒ, 1919-1920 ԹԹ. /

1. Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանային վեճերը նոր սրության հասան 1919թ. աշնանը: Ուժի միջոցով և անգլիացիների օգնությամբ իր իշխանությունը Ղարաբաղի վրա տարածելուց հետո՝ Ադրբեջանը ծեռնամուխ եղավ Զանգեզուրը տիրելու իր վաղեմի մտադրությանը: Առաջ քաշվեցին նաև այլ տարածքային պահանջներ: Հայ-ադրբեջանական կոնֆերանս հրավիրելու Հայաստանի կառավարության 1919թ. հոկտեմբերի 19-ի առաջարկն ընդունվեց Ադրբեջանի կողմից: Սակայն մինչ կողմերը բանակցում էին կոնֆերանսի հրավիրման շուրջ Ադրբեջանը պատրաստվում էր հարցերը լուծել ուժով՝ Զանգեզուրի սահմաններին մոտեցնելով նոր զորամիավորումներ: Այդ հանգամանքը հարցականի տակ դրեց Բաքվում նշանակված օրը կոնֆերանսի հրավիրումը: Նախատեսված կոնֆերանսի աշխատանքներն սկսվեցին 1919թ. նոյեմբերի 23-ին Թիֆլիսում երկու հանրապետությունների վարչապետերի միջև ստորագրված համաձայնագրից հետո:
2. 1919թ. դեկտեմբերի 14-ին տեղի ունեցավ հայ-ադրբեջանական կոնֆերանսի բացումը, կոնֆերանսի աշխատանքների հենց սկզբից պարզ դարձավ, որ կողմերը կանգնած են միանգամայն տարբեր դիրքերի վրա և քննարկվելիք հարցերի վերաբերյալ ունեն տարբեր մոտեցումներ: Ակնհայտ էր, որ Ադրբեջանը մտադրություն չունի քննարկելու Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող հարցերից և ոչ մեկը: Նրանց համար մեծ կարևորություն էր ներկայացնում Անդրկովկասյան կոնֆեդերացիայի ստեղծման և այդտեղ Հայաստանի մասնակցության հարցը: Դրանում շահագրգռված էին Անտանտի երկրները և Ամերիկայի Միացյալ Նահանգները, որոնց ներկայացուցիչները զգալի դեր էին խաղում տարածաշրջանում: Համաձայնությունը չկայացավ:

Հայկական պատվիրակությունը պնդում էր, որ առաջին հերթին անհրաժեշտ է վերջ տալ զինված ընդհարումներին, որոշել երկաթուղային և առևտրական հարաբերությունների խնդիրը, կարգավորել գաղթականների վիճակը, լուծել երկու հանրապետությունների քաղաքացիների իրավական-դատաստանական հարաբերությունների խնդիրը, հիմնել հյուպատոսական ծառայություններ և այդպիսով երկու ժողովուրդների միջև հաստատել նորմալ տնտեսական և իրավական հարաբերություններ՝ դրանով նախապատրաստելով թե՛ սահմանաբաժանումը և թե՛ կոնֆեդերացիան: Որոշվեց կոնֆեդերացիայի հարցը քննարկել

Թիֆլիսում երեք պետությունների կոնֆերանսում, նախապես տեղերում այն քննարկելուց հետո:

1920թ. ապրիլի 9-22-ը Թիֆլիսում կատարած կոնֆերանսը ևս արդյունք չտվեց: Որոշվեց ուղարկել հանձնաժողով տեղերում իրավիճակը պարզելու և կոնֆերանսին զեկուցելու համար: 1920թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացմամբ բանակցային գործընթացը դադարեց:

3. Հայ-ադրբեջանական կոնֆերանսի ընդմիջումը, փաստորեն, նշանակում էր դրա հետաձգումը մինչև Թիֆլիսում ծրագրավորված եռակողմ և երկկողմ կոնֆերանսների բացումը: 1920 թվականի սկիզբը նշանավորվեց հայ-ադրբեջանական նոր ռազմական բախումներով, որն էլ ավելի սրեց հարաբերությունները երկու հանրապետությունների միջև, իսկ կոնֆերանսի հրավիրումը դարձրեց անհնարին:

ԿԱՐԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
/ՀՀ ԳԱԱ ՊԻ/

1920թ. ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ

Մայիսյան ապստամբությունը նախօրոք նախապատրաստված չլինելով, դատապարտված էր պարտության: ՀԿԿ-ն որոշ աշխատանք տանելով երկրի ներսում: Այն իշխանության գրավման խնդիրը կապում էր Խորհրդային Ռուսաստանի օգնության հետ և մայիսի 1-ին զինված ապստամբություն սկսելու նպատակ չուներ: Նման նպատակ չուներ նաև Ալեքսանդրապոլի կոմիտեն:

Դեպքերի նմանօրինակ զարգացման վրա ազդում են երկու հանգամանք: Նախ՝ Ալեքսանդրապոլի իշխանությունների և դաշնակցության տեղական կոմիտեի թուլությունն ու անկարողությունը, որի հետևանքով նրանք չեն կարողանում մայիսմեկյան երթը տանել նախատեսված հունով, որի պատճառով ցուցարարները գնում են բոլշևիկների ետևից: Վերջիններս միտինգում հանդես են գալիս հակակառավարական լոզունգներով և որ ամենաանթույլատրելին է՝ շարժման մեջ են ներքաշում զինվորական մասերին, որոնք մեծ դեր են խաղում մայիսմեկյան խաղաղ ցույցն ապստամբության վերածելու գործում: Ալեքսանդրապոլի իշխանությունների՝ Սարգիս Մուսայելյանին ձերբակալելու անհաջող փորձից հետո, զինվորներն իրենց հավատարմությունն են հայտնում նրան: Զորքը չքայ-

քայելու նպատակով նրանց են միանում նաև որոշ սպաներ ու բարձր հրամանատարությունը՝ ստեղծելով այնպիսի տպավորություն, թե ամբողջ զորքն անցել է ապստամբների կողմը: Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպության քաղաքային կոմիտեն ստիպված է լինում կանգնել ապստամբության գլուխ: Իր հերթին Հայաստանի կոմիտեն, կանգնած լինելով փաստի առաջ, ստիպված է լինում միջամտել՝ ելույթին կազմակերպված բնույթ տալու համար:

Մայիսմեկյան ցույցերը ապստամբության վերածելու գործում կարևոր դեր խաղացած երկրորդ հանգամանքը՝ Ադրբեջանի խորհրդայնացման մասին լուրն էր, և հատկապես մայիսի 1-ին Խորհրդային Ադրբեջանի, ապա և Խորհրդային Ռուսաստանի Կովկասյան ռազմաճակատի խորհրդի ներկայացուցչի վերջնագիրը՝ ուղղված Հայաստանի կառավարությանը: Այս վերջնագրերով նրանք պահանջում էին հեռացնել հայկական զորքերը Ղարաբաղից և Զանգեզուրից՝ հակառակ դեպքում սպառնալով պատերազմով: Ելնելով այս հանգամանքից՝ Հայաստանի կառավարությունը մայիսյան շարժումները համարում է արտաքին ուժերի, հատկապես ռուսների և թուրքերի ձեռքի գործը, և վճռական միջոցներ է ձեռք առնում Հայաստանի անկախության պահպանման համար: Մայիսյան դեպքերը փաստորեն արագացնում են նոր կառավարություն կազմելու խնդիրը՝ հանգեցնելով կառավարության և դաշնակցական կուսակցության՝ կառավարման մեթոդների միջև եղած հակասության հանգուցալուծմանը: Կառավարող դաշնակցական կուսակցությունը թեև մեծամասնություն էր կազմում խորհրդարանում, սակայն հասարակական կազմակերպությունների և տեղական կուսակցական կազմակերպությունների միջոցով փորձում էր ստիպել կառավարությանը գործել հեղափոխական մեթոդներով: Բացառապես դաշնակցական Բյուրոյի անդամներից բաղկացած նոր կառավարությունը անմիջապես դիմում է կտրուկ միջոցների: Սակայն փոխել դեպքերի հետագա ընթացքը նրան չի հաջողվում: Այն չի հաջողվում նաև Հայաստանի կոմիտեին, որը մայիսի 6-ին Ալեքսանդրապոլ է ուղարկում իր ներկայացուցիչներին՝ հրահանգելով կանգնեցնել անկազմակերպ ապստամբությունը: Մայիսի 10-ին Ալեքսանդրապոլում հռչակվում է խորհրդային իշխանություն:

Իշխանությունը քաղաքում հեշտությամբ գրավելուց հետո ապստամբներն ընկնում են անելանելի դրության մեջ: Ներքին անխուսափելի ճգնաժամի հետևանքով քաղաքն առանց կռվի հանձնվում է իշխանություններին:

Ալեքսանդրապոլում մայիսյան ապստամբության հիմնական պատճառներն էին. առաջին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և կառավարող դաշնակցական կուսակցության միջև եղած հակասությունը կառավարման մեթոդների վերաբերյալ, որը հանգեցրել էր կառավարման համակարգում երկիշխանության առաջացմանը և դաշնակցական կուսակ-

ցության թուլացմանը: Եվ երկրորդ, Հայաստանի Հանրապետության կառավարության վարած արտաքին քաղաքականությունը, որը, սթափ չգնահատելով միջազգային հարաբերություններում տեղի ունեցած փոփոխությունները, մասնավորապես, Ռուսաստանում և Անդրկովկասում խորհրդային իշխանության հաստատումն ու ամրապնդումը՝ վտանգի տակ էր դրել Հայաստանի բնակչության ֆիզիկական գոյությանը:

ԱՐՏԱԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
/ՀՀ ԳԱԱ ՊԻ/

ՀՍԽՀ ԱՌԱՋԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայոց պետականության պատմության մեջ իր առանձնահատուկ տեղն է գրավում 1922թ. փետրվարի 3-ին պաշտոնապես ընդունված հայոց առաջին՝ ՀՍԽՀ սահմանադրությունը /հիմնական օրենքը/: Այն օրենսդրական կարգով հռչակեց հայոց ազգային սուվերեն պետականության հիմնական սկզբունքները, նշեց սոցիալիստական նոր կյանքի ուղիները: Խորհրդային Հայաստանի անդրանիկ սահմանադրությունը հռչակեց բանվորների ու աշխատավոր գյուղացիների հեղափոխական դիկտատուրայի հաստատումը:

Սահմանադրությունը ոչ միայն խորհրդային իրավունքի հիմնական իրավաբանական աղբյուրն է, այլև իրավագիտության կարևորագույն գաղափարական, տնտեսական ակունքներից մեկը:

1922թ. մշակվեց ՀՍԽՀ սահմանադրությունը, որը վավերացրեց հասարակական ու պետական նոր կարգի, իշխանության, կառավարման և արդարադատության մարմինների ընտրական սիստեմի կազմակերպման ու գործունեության հիմնական սկզբունքները, ինչպես նաև քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները:

2. ՀՍԽՀ առաջին Սահմանադրությունն ուներ խորհրդային հանրապետությունների բոլոր հիմնական առանձնահատկությունները:

Վավերացվեց արտադրության հիմնական միջոցների կապիտալիստական սեփականությունը՝ նպատակ հետապնդելով վերջնականապես վերացնել մասնավոր սեփականությունը: Երկրի կառավարումը հանձնվեց աշխատավոր ժողովրդին, սահմանվեցին աշխատավորների դեմոկրատական լայն իրավունքներ:

Խորհրդային Հայաստանի առաջին սահմանադրությունը օրենսդրական կարգով ամրապնդեց պրոլետարիատի դիկտատուրան բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորների խորհուրդների ձևով, որոնց վստահված էր պետության ամբողջ կառավարումը, ինչպես կենտրոնում, այնպես էլ տեղերում: Հիմնական օրենքը ձևակերպեց հավասար իրավունքներ աշխատավորների համար, անկախ ազգությունից ու դավանանքից: Սահմանադրության 2-րդ հոդվածն արձանագրում էր. «ՀՍԽՀ սահմաններում բոլոր աշխատավորներն առանց ազգի, դավանանքի խտրության վայելում են հավասար իրավունքներ»:

3. Սահմանադրությունը վավերացրեց խորհրդային իշխանության տնտեսական հիմքը: Հողը, նրա ընդերքը, ջրերն ու անտառները, մասնատիրական ու կրոնական հաստատությունների շարժական ու անշարժ գույքը, երկաթուղիները, բանկերը, խոշոր արտադրության բոլոր միջոցները հայտարարվեցին պետական համաժողովրդական սեփականություն /հոդվ. 4/:

ՀՍԽՀ սահմանադրությունը տվեց խորհրդային քաղաքացիների հիմնական իրավունքների ու ազատությունների ծավալուն բնորոշումը, այն է՝ խղճի, մամուլի, ժողովների, միտինգների, ցույցերի և միությունների ազատություն, կրթության իրավունքի, ռասսայական ու ազգային պատկանելիությունից անկախ քաղաքացիների իրավահավասարություն, ընտրելու և ընտրվելու իրավունք: Եկեղեցին անջատվեց պետությունից, իսկ դպրոցը՝ եկեղեցուց:

Հեղափոխական դիկտատուրան ապահովելու և արտաքին ու ներքին հակահեղափոխությունից պաշտպանվելու նպատակով սահմանադրությամբ կազմավորվում էր Խորհրդային Հայաստանի կարմիր բանակը, բոլորի համար պարտադիր դարձնելով զինվորական ծառայությունը:

4. Թեև ՀՍԽՀ սահմանադրությունը շատ բաներով նման էր ՌՍՖԽՀ հիմնական օրենքին, սակայն ուներ իր առանձնահատկությունները.

ա/ Ի տարբերություն Ռուսաստանի, Խորհրդային Հայաստանը հռչակվեց որպես ունիտար պետություն: Այն բաժանվում էր վարչատարածքային միավորների, որոնք ինքնուրույն պետական կազմավորումներ չէին: ՀՍԽՀ /որպես ունիտար պետություն/ տարածքում գործում էր մեկ սահմանադրություն, մեկ օրենսդրական և կառավարական մարմինների միասնական համակարգ:

բ/ Խորհրդային Հայաստանի սահմանադրությունը վճռականորեն մերժեց «որևէ ազգային-հարձակողական քաղաքականություն հարևան երկրների ու ժողովուրդների նկատմամբ», հաստատվում ու ամրապնդվում էր հարևանների հետ բարեկամական դրացիությունը

/հոդվ. 8/: Սահմանադրական այդ դրույթն անցյալում հայ ժողովրդի ծանրագույն փորձությունների կրած բնական ռեակցիան էր:

գ/ Օրենքներ հրատարակելու բացառիկ իրավունքը վերապահվում էր Հայաստանի երեք բարձրագույն մարմիններին՝ խորհուրդների համագումարին, Կենտրոնական Գործադիր Կոմիտեին և ժողովրդական կոմիսարների խորհրդին: Որևէ այլ մարմին և ոչ մի պաշտոնատար անձ օրենսդրական իրավունք չուներ: Ժողկոմներն իրավունք ունեին որոշումներ ընդունել և կարգադրություններ անել միայն իրավասության սահմաններում:

Այսպիսով, ՀՍԽՀ սահմադրությունը, նրա ընդունումը, դասակարգային բնույթի ծայրահեղական նորմերով հանդերձ, կարևոր իրադարձություն էր հայ ժողովրդի պատմության մեջ: Այն առաջինն էր հաստատում և ամրապնդում հայոց պետականությունը:

ԱՇՈՏ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ՊԻ)

«ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ» ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՇՈՒՐՋ

1. Մինչև «Թուրքական պատմական ընկերության» ստեղծումը Թուրքիայում պատմագիտական ուսումնասիրություններ հիմնականում կատարվել են միայն օտարերկրացի գիտնականների կողմից: 1920-30-ական թվականների բարեփոխումների ժամանակ ձևավորված «նոր պատմական հայեցակարգը» հիմք հանդիսացավ թուրքական պատմական ընկերության ստեղծման համար:

Մինչ թուրքական պատմական ընկերության հիմնադրումը գոյություն ուներ «Թուրքական օջախներ» կազմակերպությունը, որի փորձերը՝ պատմական ուսումնասիրություններ կատարելու ուղղությամբ, արդյունավետ չէին: «Թուրքական օջախների» վեցերորդ համագումարում՝ 1930 թվականի ապրիլի 23-ին դրվեց «Թուրքական պատմական ընկերության» հիմնաքարը:

2. «Թուրքական պատմական ընկերությունը» ստեղծվել է Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի նախաձեռնությամբ՝ նպատակ հետապնդելով ձեռնամուխ լինել Թուրքիայի պատմության շուտափույթ ուսումնասիրությանը՝ ելնելով ազգային շահերի տեսանկյունից: Ընկերության առաջին գործը

հանդիսանում է ուսումնական հաստատությունների (լիցեյների) համար պատմության դասագրքերի հրապարակումը: Այնուհետև ընկերությունն իր առջև խնդիր է դրել պատմության էջերից վերացնել և ընդհանրապես հերքել հայոց ցեղասպանության փաստը: Այդ նպատակով ընկերության պատմաբանները, խեղաթյուրելով պատմական իրողությունները, հրապարակել են բազմաթիվ աշխատություններ:

«Թուրքական պատմական ընկերությունն» անմիջականորեն գտնվել է երկրի իշխանությունների հովանու ներքո և կատարել է նրանց հանձնարարությունները:

3. Թուրքական աղբյուրները նշում են, որ Աթաթուրքի հանձնարարությամբ ընկերության անդամներն աշխատում էին մեծ արդյունավետությամբ: Միևնույն աշխատանքը միաժամանակ հանձնարարվում էր տարբեր հաստատությունների մասնագետների, և միայն Աթաթուրքի հավանությանն արժանանալուց հետո, հրապարակման իրավունք էր ստանում: Աթաթուրքը հիմնականում մեծ կարևորություն է տվել Օսմանյան պատմության լուսաբանմանը, քանի որ Թուրքիայի պատմությունը առավել խոցելի էր հենց այդ ժամանակաշրջանում: Ուշագրավ է, որ շատ դեպքերում կայսրության և հանրապետության պատմությունները ներկայացվում էին մեկ օրգանական կապի մեջ: 1932թ. Աթաթուրքի երեք որոշումներով դպրոցական և բուհական դասագրքերում մտցվում են «անհրաժեշտ փոփոխություններ» և «ուղղումներ», որոնք պետք է ապահովեին օսմանիզմի և թուրքիզմի գաղափարները կրթական համակարգում: Փաստորեն «Թուրքական պատմական ընկերության» աշխատությունները, ինչպես խոստովանում են նաև թուրք հեղինակները, հիմնականում նպատակաուղղվել են հանրությանը Թուրքիայի այդ «պատմական նոր հայեցակարգը» ներկայացնելուն:

ԱՐՈՒՄՅԱԿ ՏԵՐՉԱՆՅԱՆ
/ՀՀ ԳԱԱ ՊԻ/

ԷՋՄԻԱԾԻՆ -- ԱՆԹԻԼԻԱՍ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1940-50-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1. 1939թ. սկիզբ առած երկրորդ համաշխարհային պատերազմը խոշոր փոփոխություններ առաջացրեց բազմաթիվ երկրների ինչպես հասարակական իրավակարգի, այնպես էլ տնտեսական փոխհարաբերությունների և գաղափարախոսությունների մեջ: Այդ ցնցումների ազդեցությունից զերծ չմնաց ինչպես Խորհրդային Միությունը, այնպես էլ Խորհրդային Հայաստանը:
2. Հայ ժողովրդի ազգապահպանության ճակատագրական խնդիրն իր վրա վերցրած հայ Առաքելական եկեղեցին, իր նվիրապետական աթոռներով՝ գլխավորությամբ Ս. էջմիածնի, մի կողմ թողնելով համայնավարական վարչակարգից կրած տառապանքները, վեր դասելով հայ ժողովրդի ընդհանրական շահը, հանդես եկավ ի պաշտպանություն Խորհրդային Միության:
3. էջմիածին-Անթիլիաս կապը կրկին վերականգնվեց, ինչը Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, վարչահրամայական գաղափարախոսության հետևանքով, մտել էր փակուղի:

Ստանալով Երուսաղեմի և Պոլսի պատրիարքությունների աջակցությունը՝ Գևորգ Չորեքչյան և Գարեգին Հովսեփյան կաթողիկոսներն իրենց եկեղեցանվեր ու ազգանվեր գործունեությամբ, տարան արդյունավետ աշխատանքներ Հայ եկեղեցու միասնականությունը և հոգեկան անքակտելի միությունն ամրապնդելու ուղղությամբ:
4. Ցանր ու անհանգիստ ժամանակաշրջանում սփյուռքում հայ կուսակցական տարբեր խմբավորումների մեջ կային Խորհրդային Հայաստանի նկատմամբ կոշտ գիծ վարելու կողմնակիցներ, որոնք չէին կիսում ողջ հայության Ս. էջմիածնի շուրջ համախմբման գաղափարը: Նրանք փորձում էին ԱՄՆ-ի հոգևոր թեմն անջատել Ս. էջմիածնից և ենթարկել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը՝ թուլացնելու համար Հայ եկեղեցու միասնականությունը:

Գնահատելով այդ երևույթի վտանգավորությունը՝ Գարեգին Հովսեփյան կաթողիկոսը ինչպես և սփյուռքում լույս տեսնող մի շարք թերթեր ու ամսագրեր իրենց դժգոհությունը հայտնեցին՝ մերժելով նման մոտեցումը:
5. Հարկ է նշել, որ նախընթաց շրջանում Ս. էջմիածնում ստեղծված պայմանները, փաստորեն, Մայր Աթոռը մեկուսացրել էին հայկական սփյուռ-

քից: Այդ տարիներին սփյուռքի հոգևոր եկեղեցական, ինչպես և ազգային մշակութային կյանքի կազմակերպման առումով խոշոր աշխատանք կատարեց Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը: Գ. Չորեքչյանի կաթողիկոսության ժամանակ, հատկապես 1946-48թթ. մեծ հայրենադարձությունից հետո, հայրենիք-սփյուռք կապերն ակտիվացան, թեև այս գործընթացն էլ ընդհատվեց 1949-ի աքսորի հետևանքով: Միաժամանակ, այս շրջանից սկսած, հայ եկեղեցին ընկավ քաղաքական հակասության մեջ. պայքար սկսվեց նվիրապետական Աթոռների՝ Ս. Էջմիածնի և Կիլիկիո կաթողիկոսությունների միջև, ինչը բերեց Հայ եկեղեցու միասնականության կորստին:

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ
/ՀՀ ԳԱԱ ՊԻ/

ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՌԱԴԻՈՅՈՎ 1988-1991ԹԹ.

Հայ ազգային պետականությունը հռչակվեց քաղաքական, սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում: Նորանկախ Հայաստանի համար առավել թանկ նստեց և՛ մարդկային, և՛ ֆինանսական առումով հայադրբեջանական պատերազմը: Ռազմական գործողություններն ընթանում էին Լեռնային Ղարաբաղի տարածքում: Պատերազմն անցավ երկու փուլով՝ կոնֆլիկտային /կամ նախապատրաստական/ և բուն պատերազմ: ԽՍՀՄ-ից անկախանալու Հայաստանի առիթներից մեկը հայադրբեջանական կոնֆլիկտն էր: Մյուսը՝ Հայաստանի արդյունաբերության ոչ ճիշտ պլանավորումը և քիմիական ձեռնարկությունների առատությունը, որը որակվեց որպես կենսա-բանական եղեռն:

Տնտեսական և դեմոկրատական նոր վերափոխումների շեմին կանգնած ԽՍՀՄ-ում չմշակվեցին քաղաքական, տնտեսական, ազգային կոնկրետ նախագծեր: Եվ քաոսային հեղափոխության այդ ժամանակահատվածում առաջինը բացվեց ԽՍՀՄ-ի ամենաթույլ վերքը՝ ազգային հարցը: Ահա այստեղից էլ սկսվեց ԽՍՀՄ-ի փլուզումը:

1985-ից ԽՍՀՄ-ում հռչակվեց դեմոկրատիա և ազատ հրապարակայնություն /կապիտալիստական մոդելով/: Սկզբնական շրջանում այն վերահսկվում էր պետության կողմից, հետո վերածվեց բռնությունների և ավարտվեց ԽՍՀՄ-ի անկումով: Նոր պայմաններում զանգվածա-

յին լրատվության միջոցները՝ ռադիոն, հեռուստատեսությունը, մամուլը, տարբեր դիրք բռնեցին: Լինելով պետական մարմին՝ հեռուստատեսությունը լիակատար պասիվ դիրք բռնեց, իսկ ռադիոն և մամուլն ավել կամ պակաս, բայց արդարացնում էին իրենց: Հայաստան-Ադրբեջան-ԽՍՀՄ կոնֆլիկտի 1988-1991թթ. ընթացքը լուսաբանվում էր ԽՍՀՄ իրավական դաշտի շրջանակներում: Հայաստանի պետական ռադիոն երբեմն դուրս գալով թույլ տվածի սահմաններից, հանդես եկավ ժողովրդական շարժման պաշտպանի դիրքերից: Իր անմիջական բանավոր խոսքով ունկնդիրների մեծ լսարանի առջև հանդես էր գալիս իրադարձությունների ճիշտ և օբյեկտիվ լուսաբանմամբ: Հայաստանի պետական ռադիոն ըմբռնել և ճիշտ ուղղով էր տանում իր հաղորդումները: Սկզբնական շրջանում եթեր են արձակվել մի քանի հաղորդումներ, որոնք պարզապես կարելի է անվանել անհաջող հաղորդումներ: Երիտասարդական հաղորդումների գլխավոր խմբագրությունը պարբերաբար եթեր էր արձակում Արցախյան օրագիր, Արցախն այսօր և գրական այլ հաղորդումներ, որոնցում տեղեկացվում էին տեղի ունեցող իրադարձությունները և Ղարաբաղի գրական ու պատմական ժառանգությունը: 1989թ. հոկտեմբերից իր գործունեությունն սկսեց ռուսերեն հաղորդումների Հայք խմբագրությունը, որի հաղորդումները հեռարձակվում էին և՛ ԽՍՀՄ-ում, և՛ նրա սահմաններից դուրս: Հաղորդումների անբաժանելի մասն էին կազմում ռեպորտաժները: Հարցի շուրջ պետական ռադիոյի եթերից ելույթ է ունեցել Գ. Էմինը, ժողովրդին ընձեռնվել է ուղիղ հեռախոսակապի հնարավորություն և նրանց հուզող հարցերին պատասխանել է իրավագետ Վլ. Նազարյանը, եթեր են արձակվել նաև ադրբեջանական հեռուստատեսության հակահայկական հաղորդումների ձայնագրություններ, հատուկ հաղորդման մեջ քննադատվել է Խորհրդային մամուլի կեղծ տեղեկություններն ու քննադատությունները հայ ազատագրական շարժման մասին և որպես խնդրո առարկայի ճիշտ մեկնաբանություն ռադիոյի եթերից քննարկվել է Հենրիխ Բորովիկի «Դիրքորոշում» հեռուստահաղորդումը:

Անշուշտ կային նաև թերություններ, բացթողումներ: Նախ, որ Արցախյան շարժման ամենօրյա իրադարձությունների մեկնաբանություն չկար և եղածն էլ ընդհանրացված մեկնաբանություն էր: Ժողովրդին ավելի շատ ինֆորմացիա տալիս էին հանրահավաքները և սփյուռքահայ լրատվական գործակալությունները:

Ի տարբերություն Հայաստանի պետական ռադիոյի, որն առանց հետադարձ հայացքի ներկայացնում էր լոկ Արցախյան շարժման ժամանակագրությունը, Ամերիկայի ձայն, Ազատություն ռադիոկայաններն ավելի խոր, բովանդակալից և բազմակողմանի ուսումնասիրության ենթարկեցին Արցախի հարցը: Իրենց ամենօրյա հաղորդումներում ներկայացնում էին արևմտյան ծառայությունների՝ Բի-Բի-Սի, Ֆրանսին-

տեր, Ռեյտեր և այլոց լուրերն ու մեկնաբանություններն Արցախի և Հայաստանի հարցի շուրջ:

Այսպիսով, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ընթացքում ռադիոն, լինելով պետական մարմին, այնուամենայնիվ հանդես եկավ որպես ժողովրդի պաշտպան: Նա պետության առջև հանդես եկավ որպես ժողովրդի ձայն:

ՎԱՀԱԳՆ ԱԳԼՅԱՆ
/ԵՊՀ, ՄՀՖ/

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1990-ԱԿԱՆ ԹԹ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը և մասնավորապես նրա անդրկովկասյան ուղղությունը 19-ական թթ. ընթացքում կրեցին մի շարք էական փոփոխություններ: Առավել որոշիչ փոփոխություններ ՌԴ /Ռուսաստանի Դաշնություն/ անդրկովկասյան քաղաքականության մեջ տեղի ունեցան Բ. Ելցինի նախագահության առաջին շրջանում, երբ Ռուսաստանը, պայմանագրային հիմքերի վրա, ապահովեց իր ռազմաքաղաքական ներկայությունը տարածաշրջանում:

ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո ՌԴ նոր ձևավորված ԱԳՆ /արտաքին գործերի նախարարություն/ և նրան աջակցող լիբերալ արևմտամետ քաղաքական գործիչները, ի դեմս Բ. Ելցինի և Ա. Կոզիրևի, 1991-1992թթ. երկրի արտաքին քաղաքականության առաջնայնություն հռչակեցին հարաբերություններն Արևմուտքի, մասնավորապես ԱՄՆ-ի հետ, նվազ ուշադրություն դարձնելով հետխորհրդային տարածաշրջանին: Այս ժամանակաշրջանը բնորոշվում է Ռուսաստանի մեկուսացմամբ անդրկովկասյան տարածաշրջանից. ՌԴ զինվորական ստորաբաժանումներն աստիճանաբար դուրս էին բերվում Անդրկովկասից՝ զենքի և զինամթերքի հսկայական պաշարներ թողնելով տարածաշրջանում:

Հայեցակարգային տեսանկյունից, 1991թ. սկզբին Բ. Ելցինը հայտարարեց, թե դեմոկրատական Ռուսաստանն այլևս չունի կայսերապաշտական նկրտումներ և ցանկանում է լինել «հավասարը հավասարների մեջ» նախկին խորհրդային հանրապետությունների հետ հարաբերություններում: Մոսկվան հայտարարեց այդ մասին՝ ելնելով մի շարք

գործոններից: Բացի այդ գոյություն ուներ համոզմունք, թե Ռուսաստանի տնտեսական քաշը կապահովի նրա գերակշռությունը ԱՊՀ /Անկախ Պետությունների Համագործակցություն/ տարածաշրջանում, նաև քաղաքական և ռազմական ոլորտներում: Ինչ վերաբերում է Անդրկովկասից և հետխորհրդային այլ տարածքներից եկող սպառնալիքների խնդրին, ապա ԱԳՆ-ի կարծիքով նրանց անհրաժեշտ էր դիմակայել՝ ներգրավվելով եվրոպական անվտանգության կառույցներ, օրինակ ԵԱՀԽ /Եվրոպայում Անվտանգության և համագործակցության խորհրդակցություն/ կառույցներ:

Սակայն 1992թ. երկրորդ կեսին և մասնավորապես տարեվերջին ի հայտ են գալիս միտումներ, որոնք ակնհայտորեն մատնանշում էին, որ Ռուսաստանի «մերձավոր արտասահմանի» հանդեպ տարվող քաղաքականության մեջ տեղի են ունենում փոփոխություններ: Դրա ապացույցներից էր 1992թ. օգոստոսին լույս տեսած «Ռազմավարություն Ռուսաստանի համար» փաստաթուղթը, որի հեղինակները ՌԴ տարբեր քաղաքական հոսանքներին պատկանող գործիչներ և գիտնականներ էին: 1993/94թթ. ՌԴ անդրկովկասյան քաղաքականության շուրջ ծնավորվեց կոնսենսուս, որը հիմնված էր հետևյալ հայեցակարգային դրույթների հիման վրա.

1. Հյուսիսային Կովկասը և Անդրկովկասը փոխկապակցված են միմյանց հետ մեկ անվտանգության համակարգի շրջանակներում: Այս տեսանկյունից անկայուն իրավիճակն Անդրկովկասում կարող է անմիջապես անդրադառնալ ՌԴ հարավային շրջանների կայունության վրա /աբխազական և հարավօսական հակամարտություններն ապացուցեցին այդ ճշմարտությունը/: Հետևաբար Ռուսաստանի դիրքերի ամրապնդումը կամ թուլացումն Անդրկովկասում անդրադառնում է Մոսկվայի դիրքերին Հյուսիսային Կովկասում:

2. Միաժամանակ ՌԴ-ն դիտարկում է Անդրկովկասն իբրև սուր մրցակցության ոլորտ տարածաշրջանային /Թուրքիա և Իրան/ և գլոբալ /ԱՄՆ/ ուժերի հետ: Այդ տեսանկյունից ՌԴ կովկասյան քաղաքականությունում առկա են զրոյական հաշվով խաղի (zero-sum game) տարրեր, երբ Մոսկվայի ազդեցության թուլացումը տարածաշրջանում կարող է հանգեցնել օտար ուժերի ազդեցության աճին:

Այս մոտեցումներն իրենց արտահայտությունը գտան 1993թ. նոյեմբերին ընդունված ՌԴ Ռազմական դոկտրինայում, որը հաստատեց ռազմական ուժի կիրառման հնարավորությունը Ռուսաստանի շուրջ ծագող հակամարտություններում /օրինակ՝ խաղաղապահ նվազեցման հետ մեկտեղ աճել են լոկալ պատերազմներից ծագող սպառնալիքները: Դոկտրինան միաժամանակ հռչակեց ռուսաստանյան զինուժի դուրս բերման ավարտը նախկին ԽՍՀՄ տարածքից: 1994թ. ապրիլին հայտա-

բարվեց, որ Ռուսաստանն իր սահմաններից դուրս ԱՊՀ-ում ունի 28 ռազմակայաններ:

Իր անվտանգության շահերն Անդրկովկասում ապահովելու նպատակով ՌԴ 90-ական թթ. առաջին կեսին իրականացրեց հետևյալ քայլերը.

1. Հզորացրեց իր տնտեսական և ռազմաքաղաքական լծակներն անդրկովկասյան տարածաշրջանում /ռազմակայաններ/ իր փաստացի ազդեցության ոլորտում պահելով այդ հանրապետությունները
2. Ներգրավեց Անդրկովկասյան պետությունները ԱՊՀ կազմի մեջ
3. Տարածաշրջանում ապահովեց իր «հատուկ կարգավիճակի» ճանաչումը միջազգային հանրության կողմից

ԱՐՄԵՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
/ԵՊՀ, ՄՀՖ/

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1991-1995ԹԹ.

Հայաստանի և հայ ժողովրդի անվտանգությունն ու բարեկեցությունը մեծապես կախված են Այսրկովկասի տարածաշրջանում տիրող վիճակից, տարբեր ուժերի և շահերի փոխհարաբերություններից: Կարևոր նշանակություն ունեն Հայաստանի երկկողմ հարաբերությունները հարևան երկրների հետ: Այս իմաստով դժվար է գերագնահատել Վրաստանի տեղն ու դերը: 1991թ. մայիսի 31-ին Վրաստանում, իսկ, այնուհետև, սեպտեմբերի 21-ին Հայաստանում անցկացվեցին համաժողովրդական հանրահավաքներ, որոնց ընթացքում վրաց և հայ ժողովուրդները միահամուռ արտահայտվեցին անկախ պետականության վերականգնման օգտին: Հայաստանի Հանրապետության իշխանությունների համար անհրաժեշտություն առաջացավ վերահիմնադրել հայ-վրացական կապերն ազգային և պետական շահերի տեսանկյունից, ստեղծել պաշտոնական քաղաքականության ծրագիր Վրաստանի նկատմամբ, հաստատել միջխորհրդարանական և միջկառավարական կապեր Վրաստանի հետ: Դեռևս 1991թ. հունվարի 4-ին Հա-

յաստանի Հանրապետություն ժամանած Վրաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատվիրակության հետ վարած բանակցությունների ընթացքում կողմերը պայմանավորվեցին ստեղծել միմյանց հետ սերտորեն համագործակցող աշխատանքային խումբ: Այնուհետև, 1991թ. հուլիսի 27-ին Թբիլիսիում Վրաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Զ. Գամսախուրդիան և Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանն ստորագրում են Վրաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջպետական հարաբերությունների հիմնական սկզբունքների մասին պայմանագիրը, որը հայ-վրացական դարավոր հարաբերությունների ընթացքում նոր գործնական քայլ էր: Համագործակցելու իրենց պատրաստակամությունը Հայաստանը և Վրաստանը հաստատեցին նաև 1991թ. դեկտեմբերի 13-ին՝ երկու կառավարությունների միջև 1992-1995թթ. տնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համաձայնագրի ստորագրումով: 1992թ. հունիսի 5-ին Ստեփանավանում հանդիպեցին Վրաստանի Պետական խորհրդի նախագահ Է. Շևարդնաձեն և Հայաստանի Հանրապետության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը. հանդիպման ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց Հայաստանի Հանրապետության և համագործակցության պայմանագրի նախապատրաստման աշխատանքներն սկսելու մասին, ինչպես նաև՝ երկու պետությունների մայրաքաղաքներում դեսպանատներ բացելու մասին: Այնուհետև, 1992թ. հոկտեմբերին է. Շևարդնաձեն և Լ. Տեր-Պետրոսյանը հանդիպեցին Թբիլիսիում:

1992թ. հունվարի 2-ի, Թբիլիսիում Ռուսթավելու պողոտայում և նրան հարող փողոցներում մղվող մարտերի ամենաթեժ պահին, հատուկ չվերթով Թբիլիսի ժամանեց Հայաստանի Հանրապետության պաշտոնական պատվիրակությունը՝ Հայաստանի Հանրապետության նախագահի գլխավոր պետական խորհրդական Ա. Մանուչարյանի գլխավորությամբ: Պատվիրակությունը եկել էր միջնորդական առաքելությամբ՝ ինչ-որ չափով հաշտեցնելու կամ գտնելու հակամարտող կողմերի շփման կետեր, անել ամեն ինչ, որպեսզի հնարավորինս դադարեցվի եղբայրասպան պատերազմը: Եղբայրասպան պատերազմը դադարեցնելու համար Հայաստանը համաձայնեցրեց երկու դիմակայող կողմերի հետևյալ առաջարկությունը. եթե Զ.Գամսախուրդիան որոշի հեռանալ Գերագույն խորհրդի շենքից, նա կարող է ժամանակավոր ապաստարան գտնել հարևան հանրապետությունում: Նոր վրացական ղեկավարության ներկայացուցիչներն իրենց պաշտոնական ելույթներում ընդգծում էին հայկական կողմի դրական դերը՝ Թբիլիսիում հակամարտությունը կարգավորելու գործում:

Շատ քիչ երկրներում է, որ կա մեծ հայկական համայնք, ինչպիսին Վրաստանում է. 1991թ. Վրաստանում ապրում էր 437 հազար հայ:

Ընդ որում, շատ խայտաբղետ պատկեր է ստացվել. երբեք թբիլիսաբնակ հայի խնդիրները չես համեմատի աբխազահայությանը հուզող հիմնահարցերի հետ, բոլորովին այլ են Ջավախքի և Աջարիայի հայության մտահոգությունները: Եվ յուրաքանչյուր դեպքում պահանջվում է առաձին մոտեցում և վերաբերմունք: 1991-1992թթ. Վրաստանի հայ համայնքի ամենախոշոր խնդիրներից մեկը Վրաստանի կառավարության այն որոշումն էր, որով արգելվում էր 21 կմ խորությամբ սահմանամերձ շրջաններում սեփականաշնորհման անցկացումը: Հակասություններ առաջացրեց նաև Ախալքալաքում և Բոգդանովկայում պրեֆեկտի նշանակման հարցը. Իավախքի հայերը պահանջում էին, որպեսզի նշանակվի հայազգի պրեֆեկտ:

ՎԱՀԵ ԻՍԱՀԱԿՅԱՆ
/ՀՀ ԳԱԱ ՊԻ/

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ 1992 ԹՎԱԿԱՆԻՆ

Լեռնային Ղարաբաղի հիմնահարցն իր միջազգայնացման փուլը թևակողխեց 1991թ. վերջին, երբ ԽՍՀՄ-ը դադարեց իր գոյությունը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ և աշխարհաքաղաքական իրականություն՝ դեկտեմբերի 8-ին Բելովեժսկում կայացած հանդիպման հայտարարության արդյունքում: ԼՂՀ հակամարտությանն ուղղված առաջին լուրջ միջնորդությունը կատարվեց Ռուսաստանի Դաշնության և Ղազախստանի կողմից: Կարգավորման փորձի սկիզբը դարձավ Բ. Ելցինի, Ն. Նազարբաևի, Լ. Տեր-Պետրոսյանի և Հ. Մութալիբովի հանդիպումը Ժելեզնովոդսկում 1991թ. սեպտեմբերի 23-ին, որին, ըստ կողմերի համաձայնության, մասնակցեցին նաև ԼՂՀ այսպես կոչված հայկական և ադրբեջանական համայնքների ներկայացուցիչները: Հանդիպման արդյունքը դարձավ մասնակիցների կողմից ստորագրված կոմյունիկեն, որն ուներ մի շարք դրույթներ: Ադրբեջանի կողմից իր ստանձնած պարտավորությունները չկատարելը և նոյեմբերի 20-ին Ղարաբաղի երկնքում տեղի ունեցած դիտորդական խմբի ուղղաթիռի պայթյունն առիթ դարձան ռազմական գործողությունների վերսկսման համար:

1992թ. հունվարի 30-ից՝ Հայաստանի և Ադրբեջանի հանրապետությունների, ի թիվս այլ նախկին խորհրդային հանրապետություն-

ների, Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Խորհրդակցությանը անդամակցությամբ, ԼՂՀ խնդիրը դրվեց ԵԱՀԽ-ի օրակարգում: Հիմնադրվելով 1973 թվականին որպես սոցիալիստական ճամբարի երկրների և ՆԱՏՕ-ի անդամ պետությունների միջև քաղաքական երկխոսության իրականացմանն ուղղված կառույց, ԵԱՀԽ-ն մեծ վերափոխումներ է ապրում հատկապես սառը պատերազմի ավարտից հետո, իր առջև ունենալով նոր խնդիրներ, որոնցից ամենակարևորը ոչ այնքան արդեն ավանդական դարձած միջպետական հակամարտություններն էին, որքան այսպես կոչված ներպետական հակամարտությունները, որոնք լուրջ սպառնալիք էին ներկայացնում հետպատերազմյան Եվրոպայի անվտանգության համակարգի համար: Ղարաբաղի հարցը ԵԱՀԽ շրջանակներ տեղափոխելն էական ազդեցություն թողեց կարգավորման հետագա ամբողջ ընթացքի վրա, քանի որ թե Հայաստանը և թե Ադրբեջանը ստանձնեցին բոլոր այն պարտավորությունները, որոնք նախատեսված էին այս կազմակերպության Հիմնարար Ակտում և հետագա գագաթնաժողովների որոշումներում:

Հայաստանի նորանկախ հանրապետությունը, սկսած ԵԱՀԽ-ում իր անդամակցության պահից, ստիպված եղավ գործ ունենալ ԵԱՀԽ-ի և ՆԱՏՕ-ի անդամ հանդիսացող, հարուստ դիվանագիտական փորձ ունեցող Թուրքիայի հանրապետության բացահայտ թշնամական գործողությունների հետ:

1992թ. սկզբին ավելի հստակ դարձան Հայաստանի և Ադրբեջանի ռազմավարական-քաղաքական կողմնորոշումները: Թեև Հայաստանի և Ադրբեջանի արտաքին քաղաքականության առանցքային խնդիրը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցն էր, երկու հարևան պետությունների դիրքորոշումներն էականորեն տարբերվում էին թե հիմնահարցի լուծման ուղիների ու մոտեցումների, և թե ռեգիոնալ այս կամ այն ուժերին ապավինելու, առավել շահավետ լուծում գտնելու հարցում /ԱՊՀ,

մանդատ-թույլտվություն: Հետզհետե ուրվագծվում էր Ռուսաստանի և Արևմուտքի, ի դեմս ԵԱՀԽ-ի մրցակցությունը խաղաղարար ուժեր տեղաբաշխելու գործում:

ԵԱՀԽ-ի և Ռուսաստանի ջանքերին զուգահեռ, սեփական առաջարկություններով էր հանդես գալիս Թուրքիան: Թուրքական կառավարությունը մարտի 25-ին հանդես եկավ մի առաջարկությամբ, որը սկզբունքորեն չէր տարբերվում որոշ ժամանակ անց ԱՄՆ-ի պետդեպարտամենտի նախկին աշխատակից Պոլ Գոբլի կողմից մշակված այսպես կոչված «մարդկանց և տարածքների փոխանակման» ծրագրից, որն ավելի ուշ ստացավ Գոբլ-Հիրոու անվանումը: Ծրագիրը նախատեսում էր Ղարաբաղի հիմնականում հայերով բնակեցված տարածքների անցումը Հայաստանին, իսկ փոխարենն Ադրբեջանին էին մնալու տնտեսական և ռազմավարական կարևորություն ունեցող մի շարք տարածքներ Ղարաբաղում, ինչպես նաև նրա իրավասության տակ էր անցնելու Զանգեզուրը:

1992թ. երկրորդ կեսից ավելի ակնհայտ է դառնում Ռուսաստան-ԵԱՀԽ մրցապայքարը՝ ԼՂ-ի խնդրի կարգավորման միջնորդության հարցում: Ռուսաստանն սկսում է ավելի ակտիվ դերակատարություն ԵԱՀԽ-ի շրջանակներից դուրս: Օրինակ՝ Ռուսաստանի պաշպանության նախարար Գրաչովի նախաձեռնությամբ սեպտեմբերի 19-ին Սոչիում ստորագրված հայ-ադրբեջանական համաձայնությունը: Այսպիսով, 1992թ. ԼՂ-ի խնդիրը դարձավ քննարկման առարկա միջազգային տարբեր ատյաններում՝ հանդիսանալով տարածաշրջանային ազդեցիկ պետությունների շահերի բախման թատերաբեմ:

ՄՀԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
/ՀՀ ԳԱԱ ՊԻ/

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ 1993Թ. ՕԳՈՍՏՈՍԻՆ

Աղդամի խմբավորման պարտությունից հետո, հակառակորդը վիթխարի կենդանի ուժ և միջոցներ կենտրոնացրեց Ֆիզուլու և Ջաբրայիլի շրջաններում՝ հարվածի գլխավոր ուղղությունը տեղափոխելով ԼՂՀ հարավ-արևելյան ու արևելյան շրջանները:

Խախտելով կրակի դադարեցման վերաբերյալ երկկողմանի պայմանավորվածությունը՝ 1993թ. օգոստոսի 5-14-ը հակառակորդն անընդհատ սրում ու լարված էր պահում իրադրությունը հակամարտության գոտում, չդադարող հրթիռահրետանակոծություններով ու հարձակումներով ստիպելով ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերին /ԻՊՈՒ/ պատասխան գործողությունների դիմել, ընդհուպ մինչև այդ կրակակետերի վնասազերծումը:

Դիմագրավելով թշնամու ուժեղ ճնշմանը, ԻՊ ուժերն օգոստոսի 15-ին հակահարձակման անցան Հադրութի շրջանի հարավում, նպատակ ունենալով ազատագրել բռնազավթված լեռնային գյուղերը: Երկօրյա մարտերի ընթացքում ազատագրվեցին Քարագլուխը, Ցորը, Բանազուրը:

Հակառակորդին այդ հնարավորությունը չտալու համար, օգոստոսի 17-ին Լաչինի շրջանում հայկական կազմավորումները մարտեր ծավալեցին «Կոբրա» կոչվող բարձունքից մինչև Ուխտասար և թշնամուց ազատագրեցին այդ տարածքը՝ դուրս գալով Ներքին Ֆարաջան գյուղի մատույցները:

Հաջողությամբ զարգացավ առաջխաղացումը նաև Վերին Կարակոյունլու, Վերին Ռաֆադինլի և Դաշքեսան գյուղերի ուղղությամբ: Հաջորդ օրը վերահսկողության տակ առնվեց ռազմավարական նշանակության Դաշքեսան լեռը /602.1/:

Մարտունու, Հադրութի և Լաչինի շրջաններում ընթացող մարտական գործողությունների հաջող ընթացքը թույլ տվեց զարգացնել հակահարձակումը նաև Ֆիզուլի-Ջաբրայիլ-Ղուբաթլու ուղղություններով: 13-րդ, 14-րդ, 15-րդ, 21-րդ և 22-րդ ԱՄՀԳ, և կենտրոնական ենթակայության ականանետային մարտկոցի զինվորներն օգոստոսի 22-ին մտան Ֆիզուլի՝ լիովին անվտանգ դարձնելով ԼՂՀ արևելյան սահմանները: Փորձելով շեղել ԻՊՈՒ հրամանատարության ուշադրությունը, հակառակորդը հարձակում ձեռնարկեց Օմարի լեռնանցքի ուղղությամբ, սակայն հետ շպրտվեց: Շարունակելով առաջխաղացումը Մարտունու ՊՇ ստորաբաժա-նումները տիրեցին Կարախանբեյլի և Ալխանլը բնակավայրերին:

Շուշիի ՊՇ ստորաբաժանումների և օգնության հասած ԻՊՈՒ այլ ստորաբաժանումների փոխհամագործակցված գործողությունների արդյունքում Ղուբաթլուի ուղղությունում կոտրվեց թշնամու դիմադրությունը:

Օգոստոսի 28-ին 83-րդ ԱՄՀԲր-ի ստորաբաժանումները մտան Վերին Շուքյուբեյլի և Ներքին Աբդուռահմանլու, որով կանխվեց հակառակորդի հարձակումը Ֆիզուլու ուղղությունում: Ռազմական ինքնաթիռների չդադարող հարձակումներն անգամ չէին կարող կասեցնել հայ զինվորների առաջխաղացումը:

Ադրբեջաբական բանակի և տեղի բնակչության կատաղի դիմադրությամբ հանդերձ, հայկական կազմավորումները երեք ուղղություններով՝ Ջաբրայիլի, Գյուլաբերդի և Հագարի գետի ձախափնյակի կողմերից խորացան Ղուբաթլուի շրջանի տարածք, շաժվելով շրջկենտրոնի ուղղությամբ:

Հադրութի շրջանի ազատագրման, Ֆիզուլու, Ջաբրայիլի, Ղուբաթլուի շրջանների կրակակետերի ճնշման օգոստոսյան ռազմական գործողությունը ռազմաքաղաքական մեծ նշանակություն ունեցավ: Վերացվեց ԼՂՀ արևելյան ու հարավային սահմանների, ինչպես նաև Ստեփանակերտ-Գորիս ավտոմայրուղու վրա կախված մշտական սպառնալիքը, վնասազերծվեցին Ֆիզուլու, Ջաբրայիլի, Ղուբաթլուի ռազմակայանները, ջախջախիչ պարտության մատնվեցին համանուն շրջաններում կուտակված թշնամական խմբավորումները, Արցախի շուրջ ընդլայնվեց անվտանգության գոտին և ԻՊՈ-ը հաստատվեցին նպաստավոր բնագծերում: Ռազմական ու բարոյահոգեբանական հարվածներ ստացած Ադրբեջանը ստիպված նստեց բանակցությունների սեղանի շուրջ: Ռուսաստանի ԱԳՆ միջնորդությամբ, օգոստոսի 31-ի հետմիջօրեին ԼՂՀ և Ադրբեջանի պատվիրակություններն ստորագրեցին հրադադարի մասին պայմանագիր:

Արագ զարգացող իրադարձություններին ուշի-ուշով հետևող տերությունները խուճապի էին մատնվել, բողոքում ու սպառնում էին: Սակայն մարտնչող հայ ազատամարտիկն իր խոսքն ասել էր հաղթական զենքի լեզվով, կանգնեցնելով նրանց կատարված փաստի առաջ:

ՀԱՅԿ ԴԵՄՈՅԱՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ԹՅՈՒՐՔԱԼԵԶՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՈՐՊԵՍ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ՄԻՋՈՑ

ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիան համակողմանի և բազմաբովանդակ գործունեություն ծավալեց նորանկախ թյուրքալեզու հանրապետությունների հետ քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում համագործակցություն հաստատելու և թուրքական ազդե-

ցությունը տարածելու ուղղությամբ: Սակայն շատ շուտով պարզ դարձավ, որ Թուրքիայի քաղաքական և տնտեսական էքսպանսիան լուրջ արգելքներ է հանդիպում ոչ միայն Թուրքիայի համեստ հնարավորությունների, այլև Ռուսաստանի, Իրանի, ինչպես նաև արագորեն զարգացող Չինաստանի կողմից:

Իրենց քաղաքական և տնտեսական էքսպանսիան կյանքի կոչելու համար թուրքական իշխանությունները բուռն գործունեություն ծավալեցին, մասնավորապես, մշակութային և կրթական համագործակցության բնագավառում: Շեշտելով հիշյալ հանրապետությունների հետ պատմական, էթնիկ և մշակութային ընդհանրությունները՝ թուրքական կողմն ընդգծում է այն հանգամանքը, որ ԽՍՀՄ-ի քայքայումով պատեհ առիթ է ստեղծվել այդ ընդհանրություններն ամրապնդելու համար: Իրականացնելով հեռահար քաղաքականություն և կարևորելով մշակույթի և կրթական ոլորտներում փոխհամագործակցության առաջնայնությունը՝ Անկարան գործողությունների լայն ծրագրեր իրականացրեց, մասնավորապես ուսանողների փոխանակման, դպրոցների, վարժարանների և համալսարանների հիմնման, համատեղ կրթական և մշակութային ծրագրերի ոլորտներում:

Թուրքալեզու հանրապետությունների և համայնքներից ժամանած սովորողների ուսումնառության ծախսերը Թուրքիայում հոգալու համար ներգրավվեցին բոլոր հնարավոր պետական և մասնավոր հիմնադրամները: Ադրբեջանն ու Կենտրոնական Ասիայի հանրապետությունները Թուրքիայի ռազմական կառքին օրգանապես կապելու և հեռանկարում ռազմական արտադրության շուկան ընդլայնելու նպատակով Թուրքիայում մեծ ուշադրություն դարձվեց ռազմական կրթության բնագավառում համագործակցությանը: Լինելով աշխարհիկ պետություն, Թուրքիան իր ազդեցությունը տարածելու համար ոչ միայն չի խուսափում, այլև մեծ տեղ է հատկացնում իսլամական կրթության ոլորտում ծրագրեր իրականացնելուն, նպատակ ունենալով բարձրացնել երիտասարդության իսլամական ինքնագիտակցությունը:

Մշակութային և կրթական համագործակցությանը հենց սկզբից լայն թափ հաղորդելու, Թուրքիայի և թուրքալեզու հանրապետությունների միջև կապերն ավելի սերտացնելու համար կարևորվեց թյուրքալեզու հանրապետություններում լատինատառ այբուբենին անցնելը, որն անկասկած, մեծ հնարավորություններ էր ապահովելու ինֆորմացիոն տեխնոլոգիայի օգտագործման, միատեսակ գրագրության և դասագրքերի պատրաստման գործում: Կիրիլիցան լատինական այբուբենով փոխարինելը պահանջում էր նշանակալից ֆինանսական միջոցներ, որն ի վիճակի չէին անմիջապես տրամադրել թյուրքալեզու հանրապետությունները և Թուրքիան, որի հետևանքով անցումը լատինատառ այբուբենին իրականացվում է առանց շռայլ միջոցներ պահան-

ջող շտապողականության: Թուրքիայի կրթական էքսպանսիային էապես նպաստում էր նաև այն իրողությունը, որ թուրքական նախաձեռնությունները շատ դեպքերում դիտվում էին որպես այլընտրանքային:

Իրականացնելով մշակութային և կրթական լայն էքսպանսիա, պատրաստելով գիտական, մանկավարժական և զինվորական կադրեր Ադրբեջանի, կենտրոնասիական հանրապետությունների և թյուրքական զանազան համայնքների համար, Թուրքիան որոշակի բազա է ստեղծում տեսանելի ապագայում իր քաղաքական և տնտեսական էքսպանսիան ուժեղացնելու համար:

ՀՈՎՍԵՓ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ
/ՀՀ ԳԱԱ ՊԻ/

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱԶԳԱՅԻՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ցանկացած էթնիկ փոքրամասնության ազգային ինքնագիտակցության վրա ազդում են հետևյալ հանգամանքները. պատմական հիշողությունը, լեզուն, կրոնը, ազգային մշակույթը, ազգային կուսակցությունները և համայնքային կառույցները, տարաբնակեցման պայմանները և ուրբանիզացման աստիճանը, դոմինանտ-պետականագոյացնող ազգի վերաբերմունքը, դրա հետևանքով առաջացող սահմանային /լուսանցքային/ վիճակի չափերը:

Ռուսաստանի հայերի ազգային ինքնագիտակցությունը վերլուծելիս անհրաժեշտ է ներկայացնել նաև համառոտ ակնարկ համայնքի ձևավորման պատմությունից:

1. Համայնքի արմատներն սկիզբ են առնում Արևելյան Հայաստանում: Հայերը հնուց ի վեր արտագաղթել են իրենց երկրից օտարների լծի հետևանքով առաջացած տնտեսական ծանր պայմանների, սեփական անվտանգությանը սպառնացող վտանգի հետևանքով: Ռուսաստանում հաստատված հայերը մեծ մասամբ արհեստավորներ էին և առևտրականներ /հիմնականում քաղաքներում/, կամ էլ ամբողջ գյուղերով վերաբնակեցված հողագործներ:

Դարերի ընթացքում Արևելյան Հայաստանից /Պարսկահայաստան/ Ռուսաստան գաղթածներին XIXդ. վերջին-XXդ. սկզբին միա-

ցան նաև Համշենից և Տրապիզոնի վիլայեթից արտագաղթած հայերը: Թե՛ առաջինները և թե՛ երկրորդներն իրենց պատմական հիշողության մեջ չէին կրում 1895-96թթ. կամ 1915թ. կոտորածների սահմռկեցուցիչ պատկերները, իսկ դարեր առաջ Հայրենիքում ունեցած դժվարությունների, հալածանքների մասին հիշողությունը հասցրել էր հանգչել:
2. Լեզուն որոշ չափով պահպանվում էր միայն կոմպակտ բնակեցված վայրերում, իսկ խոշոր քաղաքներում ցրված հազարավոր հայեր որպես իրենց մայրենի լեզու ընդունում են ռուսերենը:
3. Կրոնն ուներ իր դերն ազգային ինքնագիտակցության պահպանման գործում միայն մինչև XX դ. 20-ականները, երբ խորհրդային կարգերը բռնաճնշումներ իրականացրեցին հոգևորականության հանդեպ:
4. Ազգային մշակույթը, հետզհետե կորցնելով կապը Հայրենիքի հետ /հատկապես խորհրդային տարիներին/, ամբողջովին զիջել է իր դիրքերը տեղի մշակույթին:
5. Ազգային կուսակցությունները Ռուսաստանի հայ համայնքներում չհասցրին ձևավորվել՝ կոմկուսի դիկտատուրայի հաստատման պատճառով: Իսկ 1988թ. հետո այստեղ ոտք դրած Դաշնակցության կառույցները, ինչպես նաև յուրաքանչյուր համայնքում ձևավորվող ոչ-կուսակցական համայնքային կառույցները դեռ թույլ են և չեն կրում համընդգրկուն բնույթ՝ տեղի հայության համար:
6. Տարաբնակեցման պայմաններն ազգային ինքնագիտակցության պահպանման տեսանկյունից գնալով վատթարանում են. հայերը աշխարհի առավել ուրբանիզացված և հետագա ուրբանիզացմանն առավել հակված ազգերից են, ինչը նպաստում է համայնքից կտրվելուն և տեղի բնակչության հետ հեշտությամբ ձուլմանը:

Ազգային ինքնագիտակցության վերելքին նպաստեցին 1988թ. սկսած Արցախյան շարժումը, 1988թ. երկրաշարժը և Ադրբեջանի հայ համայնքի տեղահանությունը, որի մեծ մասը գաղթեց Ռուսաստան:

Այսօր էլ Ռուսաստանի հայ համայնքը համալրվում է Հայաստանից մշտական բնակության կամ ժամանակավոր /արտագնա/ աշխատանքների մեկնող պասիոնար զանգվածով:

Սակայն այս ամենը գեթ ընթացիկ իրադարձություններ և երևույթներ են, որոնք, լինելով անցողիկ, չեն կարող հանդիսանալ համայնքում ազգային գիտակցության հարատև վերելքի գրավական:
7. Որոշ տարածաշրջաններում ազգային խտրականության հետևանքով ձևավորվող այսպես կոչված «սահմանային» կամ «լուսանցքային» վիճակն ունի երկակի ազդեցություն ցանկացած ազգային համայնքի, այդ թվում նաև հայ համայնքի վրա:

Մի կողմից, այն մշտական լարվածության մեջ է պահում տվյալ դեպքում հայերի և ռուսների հարաբերությունները որոշակի մարզերում, ձևավորում հայ համայնքի ներսում անհանգիստ հոգեբանական մթնո-

լորտ, օտարվածության զգացում: Այս ամենն ինքնին չի կարող համարվել դրական երևույթ:

Սակայն, մյուս կողմից, նույն այդ սահմանային վիճակը ձևավորում է համայնքի ներսում ինքնապահպանման բնազդ, խտրականության ազգային ինքնագիտակցության վերելքով ընդդիմանալու ձգտում, ինչն էլ նպաստում է համայնքի կոնսոլիդացմանը՝ ազգային արժեքների շուրջ: Դա միանշանակորեն դրական երևույթ է:

Ռուսաստանում հայկական տարրի և՝ մշակութային, և՝ քաղաքական գործունեությունն անհրաժեշտ է հստակորեն տարանջատել՝ ելնելով ազգային մշակույթի և ազգային քաղաքականության հետ դրանց առնչվածության աստիճանից:

Ռուսաստանյան Դաշնության հայ քաղաքական էլիտայի ներկայացուցիչ է հայկական ծագում ունեցող այն քաղաքական գործիչը, որի գործունեության ելակետում ընկած է ազգային շահը, կամ գոնե անվնաս կերպով զուգորդվում է ռուսաստանյան պետական շահերի հետ: Դրանք են համայնքային կառույցների և ազգային կուսակցությունների ներկայացուցիչները, ինչպես նաև որոշ առանձին անհատներ, ինչպիսիք են Ա. Աղաբաբյանը և Ա. Միհրանյանը և ուրիշներ, այնպես էլ անցյալում Լազարյանները, Ստ. Շահումյանը, Հ. Բաղրամյանը և ուրիշներ:

Մշակութային այն գործիչները որոնք իրենց ստեղծագործական գործընթացում օգտագործում են ինչպես ռուսական, այնպես էլ հայկական մշակույթի հարստությունը, կարող են դասվել ազգային մշակութային վերնախավի ներկայացուցիչների շարքում: Այդպիսիք են, օրինակ Ա. Ջիգարխանյանը, Ռ. Բաբայանը, իսկ անցյալում նաև Այվազովսկին, Փարաջանովը և ուրիշներ:

Մեր կարծիքով, արվեստի այն գործիչները, որոնք հրաժարվում են իրենց ազգային ծագումից, չեն կարող համարվել հայկական մշակույթի ներկայացուցիչներ:

Այսպիսով, ակնառու է, որ Ռուսաստանում, որը մշակութային, բարոյահոգեբանական, պատմական և այլ հանգամանքների հետևանքով եղել է հայերի արտահոսքի հիմնական երկիրը, մեր հայրենակիցները հոծ բնակեցման վայրերում ազգային նկարագիրը, մշակույթը պահպանել են առավել դյուրին, մինչդեռ ցրված ազգային տարրը բռնել է տարալուծման ուղին: Հայ-ռուսական ներկա փոխառնչությունների հիմնական նպատակներից մեկը պետք է լինի վերը նշված ասսիմիլացիոն գործընթացներին առավելագույն խոչընդոտումը:

ԹԱՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

/ԵՊՀ/

1905-1906թթ. ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ. ՊԱՏՃԱՌԱ-ՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄ

- 20-րդ դ. սկզբին Անդրկովկասի թաթարների մոտ, ի տարբերություն հայերի ու վրացիների, էթնիկ հավաքականությունն առավել թույլ էր արտահայտված:
- Հայկական և վրացական ազգային շարժումների ձևավորումն ու հետագա զարգացումը ընթանում էին հիմնականում 19-րդ դ. երկրորդ կեսին, իսկ թաթարների ազգային շարժման ծավալումը, էթնիկ ինքնության ձևավորումն ու արտահայտումը տեղի ունեցավ ավելի ուշ՝ առավելապես 20-րդ դ. առաջին տասնամյակում:
- Ռուսական կառավարական շրջանակներում ձևավորվել էր այն կարծիքը, որ ցարիզմը հակակայսերական ուժերի դեմ պայքարում կարող էր հենվել իրեն «հավատարիմ» թաթարների վրա: Թաթարների վերաբերյալ այս տեսակետի ձևավորումը նրանց մոտ հավաքական էթնիկ ինքնագիտակցության թույլ զարգացվածության հետևանք էր:
- Հավաքական ինքնագիտակցության առաջին դրսևորումները թաթարական վերնախավի մոտ տեղի ունեցավ 1905 թ.-ից սկսած և առավել ցայտուն արտահայտվեց հայ-թաթարական ընդհարումների ընթացքում:
- Սոցիալ-տնտեսական ծանր պայմանները, կրոնական քարոզչությունը, մահմեդականների իրավական անհավասարությունը, քաղաքական վերնախավի իշխանական ձգտումները պարարտ հող էին ստեղծել ազգայնական շարժման ծավալման համար:
- Ռուս-ճապոնական պատերազմում Ռուսաստանի պարտությունը, ռուսական առաջին հեղափոխության ծավալումը, ներքին ծանր կացությունը երկրում նպաստեցին Թուրքիայի ազդեցության ուժեղացմանը, թուրքամետ տրամադրությունների ակտիվացմանը Անդրկովկասի թաթարների շրջանում:
- Ռուսահպատակ թուրքալեզու ժողովուրդների մոտ հետզհետե ձևավորվում էր «Մեծ Թուրան»-ի ստեղծման գաղափարը:

- Թաթարական ազգայնական շարժումը ուներ հստակ պանիսլամիստական և պանթուրքիստական ուղղվածություն:
- 20-րդ դ. սկզբին Անդրկովկասում պանիսլամիզմի և պանթուրքիզմի դրսևորումներից առավել ցայտունը «հակահայկականությունն» էր:
- Պանիսլամիզմն ու պանթուրքիզմը ոչ միայն սպառնում էին հայերի ֆիզիկական գոյությանը, այլև Ռուսաստանի ամբողջականությանը, ինչը դեռևս ռուսական արքունիքում և դիվանագիտական շրջանակներում չէին գիտակցում:
- Հայտնի է թաթարների շրջանում սոցիալ-ֆեդերալիստների «Հեյրաթ» կուսակցության գործունեության մասին, որն իր ծրագրում 1905 թ.-ի աշնանը առաջադրում էր Ադրբեջանի տարածքային ինքնավարության խնդիրը:
- 1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումների ընթացքը գալիս է ապացուցելու այն, որ թաթարներն էքնիկ զտում էին անցկացնում «Հեյրաթ» կուսակցության ծրագրում նշված և ապագայում ստեղծվելիք Ինքնավար Ադրբեջանի տարածքում:
- Հայ-թաթարական ընդհարումների ընթացքում Անդրկովկասի թաթարները իրականացնում էին պանթուրքիզմի ծրագրի կարևորագույն և որոշիչ փուլերից մեկը, այն է՝ արևելահայերի ոչնչացումը:
- Թուրքիայում 1908 թ. երտթուրքական հեղաշրջումից հետո պանթուրքիստական քարոզչությունն ավելի ակտիվացավ և առաջադրվում էր Կովկասյան ինքնավարության հաստատման գաղափարը, որին առավել աջակցում էին Անդրկովկասի թաթարները:
- Հայկական ազգային շարժումը նպատակ ուներ պահպանել հայության ֆիզիկական գոյությունը, որը վտանգված էր Թուրքիայում: Այն ուներ ազատագրական բնույթ: Թաթարական ազգայնակությունը նվաճողական էր, քանի որ արտահայտվում էր պանթուրքիզմով, որի նպատակներից էր մահմեդական աշխարհի միջև հայկական «սեպի» վերացումը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐԱՅՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՄԻՎԱՆԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ
ԱՌԱՋԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ 1

ՄԵԼԻՔՅԱՆ ԿԱՐԻՆԵ

«Narratio de rebus Armeniae»-Ն ՀԱԶՎԱԳՅՈՒՏ
ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇ ՓԱՍՏԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ 3

ԱՐՄԵՆ ՔԵՇԻՇՅԱՆ

ՍԱՍԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ԽՆԴԻՐԸ
ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ 4

ՄԵՐԳԵՅ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1826-1828ԹԹ.
ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ 5

ՀԱԿՈԲ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԲԱԺԱՆՈՒՄԸ /XVI-XIX ԴԴ. I ԵՐԵՍՆԱՄՅԱԿ/ 7

ԱՆԱՀԻՏ ԽՈՄՐՈՎԱ

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՎԱՐՉԱԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐՈՒՄ 8

ՀԱՄՍԻԿ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՋԱՆՇԱՆԻ «ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՐՑԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ 10

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՍԱՅՆՔԻ
ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԱՍՆ-ՈՒՄ 12

ՄԱՐԻԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ՋՈՀՐԱՊԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ՕՍՄԱՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԻՑ ՀԵՏՈ 14

ՀՈՎԱԿԻՄ ԲՈՅԱՋՅԱՆ

ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ
ՀԱՐՑՈՒՄ ԲԱԼԿԱՆՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ՆԱԽՕՐՅԱԿԻՆ.....15

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԱՅՈՒՄԸ
ԵՎ ՍԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ
/1912Թ. ՎԵՐՋ-1913Թ. ՍԿԻԶԲ/ 17

ՎԱՐԴԱՆ ԽԱՌԱՏՅԱՆ

1917 Թ. ԱՆԳԼԿՈՎԿԱՍԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՎԵՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 19

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 20

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ 22

250 դր.

ՅՈՒՐԻԿ ՂՈՒԼՅԱՆ

ՀԱՅ - ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ
/ԲԱՔՈՒ, 1919 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ/ 24

ԿԱՐԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ 25

ԱՐՏԱԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՍԽՀ ԱՌԱՋԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ 27

ԱՇՈՏ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

«ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ»
ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՇՈՒՐՋ 29

ԱՐՈՒՍՅԱԿ ՏԵՐՅԱՆՅԱՆ

ԷՋՄԻԱԾԻՆ -- ԱՆԹԻԼԻԱՍ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1940-50-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 31

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ
ՌԱԴԻՈՅՈՎ 1988-1991ԹԹ. 32

ՎԱՀԱԳՆ ԱԳԼՅԱՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 90-
ԱԿԱՆ ԹԹ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ 34

ԱՐՄԵՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅ- ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
1991-1995ԹԹ. 36

ՎԱՀԵ ԻՍԱՀԱԿՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԻՄՆԱՀԱՐՑԸ 1992 ԹՎԱԿԱՆԻՆ 38

ՄՀԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ 1993Թ. ՕԳՈՍՏՈՍԻՆ 40

ՀԱՅԿ ԴԵՄՈՅԱՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ
ԹՅՈՒՐՔԱԼԵԶՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՈՐՊԵՍ
ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ՄԻՋՈՑ 42

ՀՈՎՍԵՓ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ ԱԶԳԱՅԻՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՋ 44

ԹԱՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

1905-1906թթ. ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐՆ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ. ՊԱՏՃԱՌԱ-ՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄ.....47

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0066672

A II
86145